



2022

ՏԱՐԵԳԻՐ ANNUAL REPORT

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ARMENIAN RED CROSS SOCIETY

ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԵՎ
ԿԱՐՄԻՐ ՄԱՅԻԿԻ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՇԱՐԺՄԱՆ
ՅԻՄՆԱՐԱՐ
ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ
FUNDAMENTAL
PRINCIPLES OF THE
INTERNATIONAL
RED CROSS AND
RED CRESCENT
MOVEMENT

ՍԱՐԴԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ
HUMANITY

ԱՆԿՈՂՄՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
IMPARTIALITY

ՉԵԶՈՔՈՒԹՅՈՒՆ
NEUTRALITY

ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ
INDEPENDENCE

ԿԱՄԱԿՈՐՈՒԹՅՈՒՆ
VOLUNTARY SERVICE

ԵԶԱԿԻՈՒԹՅՈՒՆ
UNITY

ՅԱՄԸՆԴՅԱՆՐՈՒԹՅՈՒՆ
UNIVERSALITY



2022 թվականին Հայկական Կարմիր խաչի ընկերությունը իր մարդասիրական առաքելությունը շարունակել է իրականացնել աշխարհը և մեր երկիրը ցնցող ճգնաժամերի պայմաններում, որոնք իրենց ազդեցությունն են ունեցել նաև Ազգային ընկերության գործունեության վրա: Մեր անձնակազմն ու կամավորներն անձնուրաց նվիրումով և պատասխանատվությամբ են իրականացրել գործունեությունը՝ հնարավորություն տալով պատշաճ արձագանք ապահովել արտակարգ իրավիճակներին: Հանդիսանալով Կարմիր խաչի և կարմիր մահիկի միջազգային շարժման լիիրավ անդամ՝ ՀԿԽԸ-ն մաս է կազմել Շարժման մի շարք նախաձեռնությունների, այդ թվում՝ Նորարարության օրակարգի և Միասնական պլանավորման, հաշվի առնելով, որ մեր կարողությունների շարունակական զարգացման նպատակը ամենախոցելիներին առավել որակյալ ծառայությունների տրամադրումն է: 2022 թվականին ավարտել և հաստատել ենք 2022-2026 թվականների ՀԿԽԸ Ռազմավարությունը:

Պետք է նշել, որ տարեցտարի ամրապնդվում է Ազգային ընկերության՝ որպես Կառավարությանն աջակցող կառույցի դերը և կարևորությունը, որի վկայությունն են պետական մարմինների հետ համագործակցության արդյունավետության շարունակական բարձրացումը և ընդլայնումը, ինչպես նաև մարդասիրական բազմաբնույթ ոլորտներում մշտական ներգրավվածությունը:

Ամփոփելով մեր մեկ տարվա գործունեությունը՝ մենք վերահաստատում ենք մեր պատրաստակամությունը շարունակելու զարգացնել մեր կարողությունները և ներգրավել նորանոր ռեսուրսներ՝ շահառուների մարդասիրական կարիքներին հնարավորինս արձագանքելու համար:

In 2022, the Armenian Red Cross Society continued to carry out its humanitarian mission in the conditions of crises that shocked the World and our country, which also had an impact on the activities of the National Society. Our staff and volunteers have carried out their activities with selfless dedication and responsibility, enabling an appropriate response to emergency situations.

Being a full member of the International Red Cross and Red Crescent Movement, the ARCS has been part of a number of initiatives of the Movement, including the Agenda for Renewal and Unified Planning, taking into account that the goal of continuous development of our capabilities is to provide more qualified services to the most vulnerable.

In 2022, 2022-2026 ARCS strategy was completed and approved. It should be noted that the role and importance of the National Society as an auxiliary organization to the Government is strengthened year by year, which is evidenced by the constant increase and expansion of the efficiency of cooperation with state bodies, as well as constant involvement in various humanitarian fields.

Summing up our activities of the year, we confirm our readiness to continue to develop our capabilities and attract new resources to best meet the humanitarian needs of our beneficiaries.

Նախագահ
Մխիթար Մնացականյան
President
Mkhitar Mnatsakanyan



2022 թվականին Հայկական Կարմիր խաչի ընկերությունը շարունակեց իրականացնել իր մարդասիրական առաքելությունը բարոյ ու մարտահրավերներով լի միջավայրում, քանի որ ճգնաժամերն ու արտակարգ իրավիճակները շարունակում էին ցնցել ինչպես ամբողջ աշխարհը, այնպես էլ՝ մեր երկիրն ու տարածաշրջանը:

Օրեցօր աճում է խոցելի և մարդասիրական աջակցության կարիք ունեցող մարդկանց թիվը, և այս իրավիճակում Ազգային ընկերությունը ջանք չի խնայել իր առջև դրված խնդիրները կատարելու համար՝ մոբիլիզացնելով անձնակազմի և կամավորների ներուժը և ներգրավելով անհրաժեշտ ռեսուրսներ: 2020-2021 թվականների արտակարգ իրավիճակների հետևանքները դեռևս շարունակել են իրենց ազդեցությունն ունենալ Ազգային ընկերության գործունեության բնույթի վրա, երբ առաջնահերթություն են դարձել առավելապես տեղահանվածների, միայնակ տարեցների և սահմանամերձ համայնքներում բնակվող երեխաների խնդիրները:

Անցյալ տարվա ընթացքում ևս՝ տանելով Կառավարությանն աջակցող դերը, սերտորեն համագործակցել ենք պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ կատարված աշխատանքի համար բարձր գնահատականի արժանանալով Առողջապահության և Արտակարգ իրավիճակների նախարարությունների կողմից:

Նախորդ տարիների համեմատ կրկնապատկված ծավալով աշխատանք է տարվել մեր ռազմավարական ուղղություններով՝ աղետների կառավարման, բնակչության տեղաշարժի, առաջին օգնության, մարդասիրական արժեքների տարածման, երիտասարդների հիմնախնդիրներին արձագանքման և այլ ոլորտներում՝ զուգահեռաբար հրատապ արձագանքելով առաջացած մարտահրավերներին:

Մասնավորապես, արձագանք է իրականացվել «Սուրմալու» առևտրի կենտրոնում տեղի ունեցած պայթյունի և հրդեհի հետևանքներին, որտեղ լավագույնս իրենց դրսևորեցին ՀԿԽԸ արձագանքման թիմերն ու կամավորները՝ անձնագրի և նվիրված աշխատանքի շնորհիվ նպաստելով հանրության շրջանում ՀԿԽԸ հեղինակության բարձրացմանը. ՀԿԽԸ արագ արձագանքման թիմերը, հոգեբաններն ու կամավորներն ավելի քան 150 ժամ աշխատեցին «Սուրմալու» առևտրի կենտրոնում՝ աջակցելով որոնողափրկարարական աշխատանքներին և տուժածների հարազատներին:

Մեկ ամիս չանցած՝ կրկին ստիպված էինք արագ մոբիլիզանալ և արձագանքել սեպտեմբերի 13-14-ի ռազմական գործողությունների հետևանքներին: Ավելի քան 7600 ներքին տեղահանված անձանց և նրանց հյուրընկալված համայնքներին ՀԿԽԸ-ի կողմից տրամադրվել է մոտ 293 միլիոն ՀՀ դրամ (մոտ 742 000 ԱՄՆ դոլարի համարժեք) օգնություն:

Մենք աշխատեցինք նաև տարեվերջին Լաչինի միջանցքի շուրջ ստեղծված իրավիճակի հետևանքով Հայաստանում մնացած երեխաների ու տարեցների հետ՝ հոգեբանական աջակցություն և մարդասիրական օգնություն տրամադրելով հարազատներից բաժանված մարդկանց:

Ընդհանուր առմամբ 2022 թվականին ՀԿԽԸ տարբեր ուղղություններով իրականացված ծրագրերում ներգրավված է եղել ավելի քան 400 000 շահառու, իսկ կամավորների թիվն անցել է 6000-ը: ՀԿԽԸ կողմից տրամադրվող մարդասիրական աջակցության ձևերի մեջ իր կայուն տեղն ունի կանխիկ աջակցությունը, որի տրամադրման համակարգը ներդրվել և զարգացվել է Ազգային ընկերության կողմից՝ յուրացնելով և տեղայնացնելով Շարժման փորձը: 2022 թ.-ին ՀԿԽԸ կողմից ընդհանուր առմամբ տրամադրվել է ավելի քան 900 միլիոն ՀՀ դրամի (մոտ 2 279 000 ԱՄՆ դոլար) կանխիկ աջակցություն: Ընդլայնել և ամրապնդել ենք նաև մեր տեղական և միջազգային գործընկերների և նվիրատուների հետ համագործակցությունը: Թափանցիկ աշխատանքի և հաշվետվողականության շնորհիվ տարեցտարի աճում է ՀԿԽԸ-ին հուսալի գործընկեր համարող կառույցների թիվը: ՀԿԽԸ-ն դարձել է Հայաստանի արագ արձագանքման բժշկական թիմի անդամ, մասնակցել ժնևում Կարմիր խաչի և Կարմիր մահիկի 23-րդ Գլխավոր համագումարին, ինչպես նաև Մոսկվայում տեղի ունեցած Ազգային ընկերությունների ղեկավարների հանդիպմանը՝ մասնակցություն ունենալով Շարժման ռազմավարական որոշումների կայացմանը: ՀԿԽԸ Առաջին օգնության փորձագիտական կենտրոնի կողմից, ինչը նշանակում է, որ մեր դասընթացները շարունակում են իրականացվել ԿԽՄՖ Առաջին օգնության, վերակենդանացման և կրթության միջազգային չափանիշներին համապատասխան:

Կազմակերպության զարգացումը շարունակում է մնալ մեր առաջնահերթություններից մեկը, և այդ ուղղությամբ, մեր գործընկերների աջակցությամբ 2022 թվականին սկիզբ է առել թվայնացման գործընթաց՝ ժամանակին համընթաց քայլերով և խոցելի խմբերին առավել որակյալ ծառայություններ մատուցելու նպատակով: Շահառուների հետ հետադարձ կապի թվային համակարգի գործարկումը առաջին քայլն է հանդիսացել համայնքների առավել արդյունավետ ներգրավվածություն և հաշվետվողականությունն ապահովելու ճանապարհին: Ընդհանուր առմամբ մեր բոլոր կամավորներին նվիրված և անշահախնդիր աշխատանքի համար, երախտապարտ ենք, գործընկերներին և նվիրատուներին, առանց որոնց հնարավոր չէր լինի իրականացնել այսչափ հսկայածավալ աշխատանք:

In 2022, the Armenian Red Cross Society continued the implementation of its humanitarian mission in a complex and challenging environment, as crises and emergencies continued to shake the entire World, as well as our country and region.

The number of vulnerable people in need of humanitarian assistance is increasing day by day, and in this situation, the National Society made any possible effort to fulfill its tasks, mobilizing the potential of staff and volunteers, and attracting necessary resources. The impact of the 2020-2021 emergencies has continued to influence the nature of the National Society's activities, prioritizing the focus on issues of the displaced people, lonely elderly and children living in border communities. Over the past year, carrying the role of auxiliary organization to the Government, we have worked closely with state and local authorities, which was highly appreciated by state authorities, particularly the Ministries of Health and Emergency Situations. Compared to the previous years, we carried out the activities planned for the year in our strategic directions, such as disaster management, population movement, first aid, dissemination of humanitarian values, responding to the youth issues and other areas with a doubled volume. Parallely, we provided urgent response to occurring challenges.

In particular, we responded to the consequences of the explosion and fire of the Surmalu market, where the response teams and volunteers of the ARCS did day absolute best, contributing to the reputation of the ARCS among the public thanks to their selfless and dedicated work. ARCS Disaster Response Teams, psychologists and volunteers have worked for more than 150 hours at the emergency site, supporting the search and rescue operations and the relatives of the victims. Thanks to the resources mobilized by the ARCS, support of the affected entrepreneurs was ensured. In total, more than 78 million AMD (around USD 198 000) was allocated to support the people and individual entrepreneurs affected by the explosion and to respond to the consequences of the disaster.

Less than a month later, we again had to quickly mobilize and respond to the consequences of the military operations of September 13-14. More than 7,600 internally displaced persons and their host communities have been provided with humanitarian assistance equal around 293 million AMD (around 742 000 USD) by the ARCS. We also worked with children and elderly people left in Armenia, as a result of the situation around the Lachin Corridor at the end of the year, providing psychological support and humanitarian assistance to people separated from their relatives.

In total, in 2022, more than 400,000 beneficiaries were involved in the programs implemented by the ARCS in various directions, and the number of volunteers exceeded 6,000.

Among the forms of humanitarian support provided by the ARCS, cash assistance has its stable place, the system of providing which was introduced and developed by the National Society, adapting and localizing the experience of the Movement. In 2022, in total, more than AMD 900 million (around USD 2 279 000) cash assistance was provided by the ARCS.

We have also expanded and strengthened the cooperation with our local and international partners and donors. Due to our transparency and accountability the number of organizations considering the ARCS as a reliable partner is increasing year by year.

The ARCS became a member of the Emergency medical team of Armenia, we participated in the 23rd IFRC General Assembly in Geneva, as well as in the meeting of the leaders of the National Societies in Moscow, taking part in the strategic decision-making process of the Movement. The ARCS First Aid Service has been recertified for another 5 years by the IFRC Global First Aid Reference Center, which means that our trainings continue to be conducted in accordance with international standards of IFRC First Aid, Resuscitation and Education guidelines.

The organization development continued to be one of our priorities, and in that direction, with the support of our partners, digitization process launched in 2022 in order to keep up with the times and provide more qualified services to vulnerable groups. Launching the digital Central feedback system mechanism with the beneficiaries is the first step towards more effective community engagement and accountability. We are very grateful to all our volunteers for dedicated and selfless attitude, and thank also our partners and donors, who made possible the implementation of this much large-scale work.

Գլխավոր քարտուղար
Աննա Եղիազարյան

Secretary General
Anna Yeghiazaryan

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը, ըստ իր 2022-2026 թթ. ռազմավարության, առաջնորդվում է հետևյալ արժեքներով.

Մարդիկ

Մենք զարգացնում ենք մարդկանց և համայնքների կարողությունները՝ գործելու հանդուրժող միջավայրում և գտնելու կայուն լուծումներ իրենց ամենասահմանափակ և խոցելի կարիքները հոգալու համար:

Ազնվություն

Մենք աշխատում ենք համաձայն մեր հիմնարար սկզբունքների՝ թափանցիկ և պատասխանատու կերպով:

Համագործակցություն

Որպես Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժման անդամ՝ մենք համագործակցում ենք կառավարության, ինչպես նաև այլ տեղական և միջազգային կազմակերպությունների հետ, հարգելով մեր խորհրդանիշները և ներկայացված անկախությունը, անկողմնակալությունը և չեզոքությունը:

Բազմազանություն

Մենք հարգում ենք համայնքների և մեր կամավորների, անդամների և աշխատակիցների բազմազանությունը՝ հիմնվելով անխտրականության և մեր անկողմնակալության և համընդհանրության սկզբունքների վրա:

Առաջնորդություն

Մենք ցուցաբերում ենք առաջնորդություն և մեր աշխատանքում ձգտում ենք գերազանցության՝ ուշադրություն դարձնելով համայնքների և դրանց իրավունքներին, կարիքներին և խոցելիությանը:

Նորարարություն

Մենք ներշնչվում ենք մեր ժառանգած պատմությունից և ավանդույթից, սակայն միաժամանակ փորձում ենք գտնել ստեղծագործական, կայուն լուծումներ խնդիրներին, դրոնք վտանգում են փոփոխվող աշխարհում ապրող մարդկանց բարեկեցությունը և արժանապատվությունը:

**ՄԵՆՔ ԱՇԽԱՏՈՒՄ ԵՆՔ
ՀԵՏԵՎՅԱԼ
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ**

**Աղետների կառավարում
Բնակչության տեղաշարժ
Որոնում ծառայություն
Առաջին օգնություն
Սոցիալ-առողջապահություն
Մարդասիրական արժեքների տարածում
Միջազգային համագործակցություն
Երիտասարդական, կամավորություն և
անդամակցություն
Կազմակերպության զարգացում
Ռեսուրսների մոբիլիզացում**

ԱՂԵՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ



Աղետների կառավարման (ԱԿ) ուղղության հիմնական նպատակն է նվազեցնել ազգաբնակչության խոցելիությունը և բարձրացնել դիմակայունությունը բնական ու տեխնաժին աղետների նկատմամբ՝ համայնքային մակարդակում աղետների ռիսկի նվազեցման միջոցով և հզորացնել Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) աղետներին նախապատրաստման և արձագանքման (ԱՆԱ) համակարգը:



Կամավոր կարողությունների միջոցով բնակչության պաշտպանության համակարգերի ամրապնդում

Կամավոր կարողությունների միջոցով բնակչության պաշտպանության համակարգերի ամրապնդում տարածաշրջանային ծրագիրը մեկնարկել է 2020 թվականին և իրականացվել է Եվրոպական միություն մարդասիրական օգնության և քաղաքացիական պաշտպանության վարչության ֆինանսավորմամբ՝ Ավստրիական գարգացման գործակալության և Ավստրիական Կարմիր խաչի հետ համագործակցությամբ:

Ծրագիրը նպատակ ուներ Հայաստանի մարզերում ամրապնդել կամավոր կարողությունների միջոցով բնակչության պաշտպանության համակարգերը, մասնավորապես փորձարկել կամավոր հրշեջ համայնքային կայանների հիմնումը և կամավորների ներգրավումը փրկարարական, մասնավորապես հրշեջ փրկարարական աշխատանքներում:

ԱԻՆ փրկարար ծառայության հետ համատեղ թիրախային համայնքներ էին ընտրվել - ՀՀ Կոտայքի մարզի Գառնի և Լոռու մարզի Մեծ Պառնի համայնքը՝ հաշվի առնելով պատահարների վիճակագրությունը և բնակավայրի հեռավորությունը ՓՃ հրշեջ կայանից:



Հրշեջ փրկարարական կայանների հիմնման նպատակով համատեղվել են համայնքապետարանների ԱԻՆ փրկարար ծառայության և ՀԿԽԸ ջանքերը. փրկարար կամավորական կայանի շենքը տրամադրվել է համայնքապետարանի կողմից, հրշեջ մեքենան՝ ՀՀ ԱԻՆ կողմից, կամավորների ընտրությունը, կրթումը, արտահագուստով և գույքով ապահովումը, ինչպես նաև սրանց հետագա կառավարումը իրականացվել է ՀԿԽԸ կողմից: Այնուամենայնիվ, հաշվի առնելով այն փաստը, որ կամավորական այս ենթակառուցվածքը գործելու է փրկարար ծառայությանն ինտեգրված՝ խումբն ակտիվացվում և կանչի է մեկնում փրկարար ծառայության հրահանգով, իրականացնելով առաջին արձագանք և, անհրաժեշտության դեպքում, առաջին օգնություն, մինչև մասնագիտացված հրշեջ խմբի ժամանումը:

Ծրագրի փորձնական փուլի հաջող ավարտի կապակցությամբ համագործակից կողմերի՝ Ավստրիական զարգացման գործակալության և Ավստրիական Կարմիր խաչի հետ համագործակցությունը շարունակվում է՝ նույն մոդելը ՀՀ բոլոր մարզերում կիրառելու նպատակով:

Ռիսկերի իրազեկում և անվտանգ վարքագիծ 2022


Հակամարտության արդյունքում տուժած ՀՀ համայնքների, մասնավորապես՝ Տավուշի, Գեղարքունիքի, Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերի սահմանամերձ բնակավայրերի բնակչության պատերազմի պայթուցիկ մնացորդների և ականների վերաբերյալ իրազեկվածության մակարդակը բարձրացնելու, պատերազմի պայթուցիկ մնացորդներով և ականներով պայմանավորված պատահարների հավանականությունը նվազեցնելու,



իրետակրծության և գնդակրծության ընթացքում առավել անվտանգ վարքագիծ ձևավորելու նպատակով «Ռիսկերի իրազեկում և անվտանգ վարքագիծ» ծրագրի շրջանակներում ՀԿԽԸ վերը նշված մարզերի մարզային մասնաճյուղերի կամավորներ-իրահանագիչները թարմացրել են իրենց գիտելիքները և կրկնել են կարողությունների զարգացման մասնագիտական դասընթացները՝ շարունակելով շարունակական տեղեկատվական դասընթացներ և քարոզարշավներ իրականացնել համայնքում՝ տարբեր տարիքային խմբերի համար տարբեր մեթոդաբանությամբ: Իրազեկման նյութերի, մեթոդաբանության, իրազեկված բնակչության մասին տեղեկատվության փոխանակում է իրականացվել Ականազերծման գործողությունների ազգային մարմնի (ԱԳԱՄ)՝ Հումանիտար ականազերծման և փորձագիտական կենտրոնի հետ:

Իրականացված դասընթացների, սեմինարների, գործնական պարապմունքների, տիկնիկային ներկայացումների, համայնքային հանդիպումների և տնային այցերի արդյունքում 2022 թվականին իրազեկում իրականացվել է 38 սահմանամերձ համայնքում, ընդհանուր առմամբ իրազեկվել է 6438 բնակիչ:

Ծրագիրն իրականացվել է Կարմիր խաչի միջազգային կոմիտեի հետ համագործակցության շրջանակներում:



Իրազեկում
իրականացվել է
38
սահմանամերձ
համայնքում



Ընդհանուր
առմամբ
իրազեկվել է
6438
բնակիչ



Սահմանամերձ դպրոցներում արտակարգ իրավիճակների պատրաստվածության մակարդակի բարձրացում 2022

Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերի խիստ սահմանամերձ բնակավայրերում կրթության հասանելիությունն ու սահմանամերձ կրթական հաստատություններում անվտանգ և ապահով կրթական միջավայր ապահովելու նպատակով 25 սահմանամերձ բնակավայրերի դպրոցներում իրականացվել է նախնական գնահատում, դրա հիման վրա դպրոցներին տրամադրվել է գույք, մասնավորապես՝ կրակմարիչներ և հակահրդեհային վահանակներ, իրականացվել են ինտենսիվ դասընթացներ անվտանգության կանոնների և դիմակայունության վերաբերյալ: Ստացած գիտելիքը դպրոցահասակների և կրթական հաստատությունների աշխատակիցների շրջանում ամրապնդելու նպատակով տարեվերջի եռամսյակը նվիրվել է բոլոր դպրոցներում տարիանման վարժանքների իրականացմանը, վարժանքների արդյունքում գրանցված բացերը, խնդիրները վերլուծվել և քննարկվել են դպրոցում՝ բոլոր մասնակիցների և մասնագետների մասնակցությամբ:

Ծրագիրն իրականացվել է Կարմիր խաչի միջազգային կոմիտեի հետ համագործակցության շրջանակներում:

Առաջին օգնության և աղետներին արձագանքման ՅԿԻՇ կարողությունների զարգացում 2022

Ինչպես նախորդ տարիներին, 2022 թվականի ընթացքում ևս Հայկական Կարմիր խաչի ընկերությունը շարունակել է բարելավել իր առաջին օգնության և աղետներին արձագանքման կարողությունները՝ շարունակաբար ամրապնդելով թվով 7 մարզային արագ արձագանքման թիմերի գիտելիքները, նրանց վերազինելով նոր գույքով և անձնական պաշտպանիչ միջոցներով, իրականացնելով վարժանքներ, այդ թվում պետական լիազոր մարմնի՝ ԱԻՆ փրկարար ծառայության հետ իրականացվող համատեղ վարժանքները:

Ծրագիրն իրականացվել է Կարմիր խաչի միջազգային կոմիտեի հետ համագործակցության շրջանակներում:

Ապահովության և անվտանգության կանոնների ներդրումը ՀԿԽԸ-ում 2022

2020 թվականից ի վեր, ի հաջորդիվ համավարակին և հակամարտությանն ուղղված ՀԿԽԸ լայնածավալ մարդասիրական արձագանքին, Հայկական Կարմիր խաչի ընկերությունը, իր աշխատակիցների և կամավորների անվտանգությանն ուղղված կարողությունները զարգացնելու և անվտանգության մշակույթը զարգացնելու նպատակով հանձն է առել իր ներքին անվտանգության առնչվող քաղաքականության վերանայման գործընթաց: Բոլոր մարզային մասնաճյուղերում նոր քաղաքականության ներդրման նպատակով իրականացվել են ինտենսիվ իրազեկման դասընթացներ մարզային մասնաճյուղերի աշխատակիցների, կամավորների, ՀԿԽԸ կենտրոնական գրասենյակի տարբեր ծառայությունների համար:

Ծրագիրն իրականացվել է Կարմիր խաչի միջազգային կոմիտեի հետ համագործակցության շրջանակներում:

Տնտեսական անվտանգության գնահատման ՀԿԽԸ կարողությունների զարգացում 2022

2020 թվականից ի վեր, ի հաջորդիվ համավարակին և հակամարտությանն ուղղված ՀԿԽԸ լայնածավալ մարդասիրական արձագանքի, կարիքի վրա հիմնված և աջակցություն տրամադրումը առաջնահերթ համարելով և մարդասիրական աջակցության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ՀԿԽԸ անձնակազմը և կամավորները՝ և՛ կենտրոնական գրասենյակից և՛ մարզային մասնաճյուղերից, բարելավել են իրենց գիտելիքները կարիքների գնահատման, բնակչության տարբեր խմբերի հետ և համայնքի հետ աշխատանքի վերաբերյալ:

Ծրագիրն իրականացվել է Կարմիր խաչի միջազգային կոմիտեի հետ համագործակցության շրջանակներում:

Հայկական Կարմիր խաչի ընկերության արձագանքը «Սուրմալու» տոնավաճառի պայթյունի հետևանքներին

Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) Աղետներին արձագանքման, Առաջին օգնության և հոգեբանների թիմերը՝ ՀԿԽԸ գործադիր տնօրեն Աննա Եղիազարյանի գլխավորությամբ, օգոստոսի 14-ին «Սուրմալու» տոնավաճառի տարածքում տեղի ունեցած պայթյունից և բռնկված հրդեհից անմիջապես հետո ժամանել են դեպքի վայր:

ՀԿԽԸ թիմը տեղում աջակցել է որոնողափրկարարական, քարամաքրման և դիերի դուրս բերման աշխատանքներին, ըստ անհրաժեշտության ցուցաբերել առաջին օգնություն և առաջին հոգեբանական օգնություն:

Որոնողափրկարարական, քարամաքրման և դիերի դուրս բերման աշխատանքներում ներգրավված են եղել ՀԿԽԸ Երևանի, Վայոց ձորի, Տավուշի և Արարատի մարզերի աղետներին արձագանքման կամավորական թիմերը, որոնք իրականացրել են հերթափոխ՝ աշխատանքների 24-ժամյա շարունակականությունն ապահովելու նպատակով: Ներգրավված թիմերի 43 անդամներն ունեցել են համապատասխան մասնագիտացված պատրաստվածություն և գույք՝ նշված գործունեությունն իրականացնելու համար:

Ընդհանուր առմամբ արձագանքման աշխատանքներում ներգրավված է եղել նաև ՀԿԽԸ 120-ից ավելի աշխատակից և կամավոր, այդ թվում՝ անձակազմի 24 անդամ, 20 առաջին օգնող, 6 հոգեբան և 30 աջակցող կամավոր: Արձագանքի ընթացքում Առաջին օգնություն է ցուցաբերվել ավելի քան 140 անձի, որոնք ունեցել են վերջույթների վնասվածքներ, ծխահարություն, հոգեբանական աջակցություն է տրամադրվել ավելի քան 150 անձի՝ տուժածների հարազատներին, ընկերներին, փրկարարներին, քաղաքացիներին և փրկարարական աշխատանքներին մասնակցող կամավորներին:



ՀԿԽԸ-ն, կամավորների միջոցով, արագ արձագանքման ծառայությունների աշխատակիցներին և ոստիկաններին, տարածքում գտնվող քաղաքացիներին, տուժածների հարազատներին տրամադրել են ջուր (ավելի քան 1000 շիշ), չոր սնունդ (ավելի քան 500 անձի), սառը սուրճ (մոտ 600 բաժակ), փրկարարական ձեռնոցներ (100 զույգ), դիմակներ՝ հորդորելով կրել և պահպանել անվտանգության կանոնները (մոտ 5000 անձի):

Դրանից բացի տարբեր անհատներ և կազմակերպություններ (Չովք, Պռոյեկտ ինտեր ինվեստ) նվիրաբերել են ավելի քան 1500 շիշ ջուր, մոտ 500 բաժակ սառը սուրճ, չոր սնունդ, քաղցրավենիք և 100 զույգ փրկարարական ձեռնոց, որոնք նույնպես տեղում բաշխվել են ՀԿԽԸ կամավորների միջոցով:

Օգոստոսի 21-ին, մոտ 150 ժամ անընդմեջ աշխատանքից հետո, Հայկական Կարմիր խաչի ընկերությունը՝ ԱԻՆ հրահանգով ավարտել է իր առաքելությունը Սուրմալու առևտրի կենտրոնի տարածքում:

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը (ՀԿԽԸ) հոկտեմբերի 17-ին դրամական աջակցություն տրամադրեց «Սուրմալու» տոնավաճառի տարածքում բռնկված հրդեհի և հաջորդած պայթյունի հետևանքով տուժած տնտեսվարողներին և նրանց աշխատակիցներին:

ՀԿԽԸ-ի կողմից իրականացրած խոցելիության գնահատման արդյունքների հիման վրա՝ տուժած խոցելի 42 տնտեսվարողներ և նրանց ընտանիքի 211 անդամները, ինչպես նաև 38 գրանցված աշխատակիցներ և նրանց ընտանիքի 186 անդամներն ստացան միանվագ դրամական աջակցություն՝ 42 700 ՀՀ դրամ՝ ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար:



Դրամական օգնությունը տրամադրվել է Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային ֆեդերացիայի Ադետներին արձագանքման արտակարգ իրավիճակների ֆոնդի ֆինանսական աջակցությամբ



Ընդհանուր առմամբ
397 անձի
 տրամադրվեց
16 951 900
 ՀՀ դրամ

ՀԿԻՇ մարդասիրական արձագանքը 2022 թվականի սեպտեմբերի հակամարտության սրացմանը

Սեպտեմբերի 13-ի ռազմական գործողությունների հետևանքով տուժած համայնքներին և ներքին տեղահանված անձանց Հայկական Կարմիր խաչի ընկերությունը՝ ԿԻՄԿ, ԿԻՄՖ, Մոնակոյի Կարմիր խաչի, Շվեյցարական Կարմիր խաչի, Ավստրիական Կարմիր խաչի, «Հանթեր ֆուդ» և «Մեյջորել Արմենիա» կազմակերպությունների աջակցությամբ ընդհանուր առմամբ տրամադրել է ավելի քան 13 000 միավոր/վաթեթ/կտոր մարդասիրական օգնություն՝ սննդի, հիգիենիկ պարագաների, հագուստի, Առաջին օգնության արկղերի, խոհանոցային իրերի, անկողնային պարագաների, առաջին հոգեբանական աջակցության տեսքով:



Աջակցությունը տրամադրվել է Վայոց ձորի, Գեղարքունիքի, Սյունիքի, Կոտայքի, Արարատի, Արմավիրի, Տավուշի, Ճիրակի մարզերի տուժած և ներքին տեղահանված անձանց հյուրընկալված համայնքներում և երևանում:

Առաջնային արձագանքին զուգահեռ ՅԿԽԸ-ն՝ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի հետ միասին, իրականացրել է ռազմական հակամարտության հետևանքով ներքին տեղահանվածների մարդասիրական կարիքների արագ գնահատում՝ համապատասխան արձագանքը շարունակելու համար:

Տուժած համայնքներում անցկացվել են Ականների և չպայթած զինամթերքի վերաբերյալ իրազեկման, ինչպես նաև Անվտանգ վարքագծի դասընթացներ:

Վայոց Ձորի Ձերմուկ քաղաքի Ձերմուկի թիվ 2 միջնակարգ դպրոցում և Սյունիքի մարզի Գորիս համայնքի թիվ 6 հիմնական դպրոցում մեկնարկել է կրթական ծրագիր, որի շրջանակներում հիմնվել են երեխաների զարգացման կենտրոններ: Հատուկ վերապատրաստված ՅԿԽԸ մարզային և համայնքային մասնաճյուղերի կամավորները կիրականացնեն ամենօրյա դասապատրաստումներ, արտադասարանական խմբակներ, սոցիալական և մշակութային միջոցառումներ, կարողությունների զարգացմանը և աշխարհայացքի ձևավորմանն ուղղված թեմատիկ քննարկումներ:

ՅԿԽԸ-ն անընդհատ համալրել է Թեժ գծերով դիմող քաղաքացիների տվյալների բազան՝ այն փոխանցելով նաև ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Առաջնային կարիքի հաշվառման հարթակ:

ՅԿԽԸ հոգեբաններն առերես (Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալի տարածքում, Վարդենիսում, Մարտունիում), առցանց (Խնձորեսկ, Կոռնիձոր, Տեղ, Սոթք, Մեծ Մասրիկ) և Թեժ գծի միջոցով (ՀՀ բոլոր մարզեր) հոգեբանական աջակցություն են տրամադրել վիրավոր և զոհված զինծառայողների հարազատներին և տեղահանված ընտանիքներին:



Դեկտեմբերի 12-ին Հայկական Կարմիր խաչի ընկերությունը՝ Հայաստանում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԻՄԿ) պատվիրակության հետ համագործակցությամբ, տրամադրել է միանվագ դրամական աջակցություն 2022թ. սեպտեմբերի 13-ի ռազմական գործողությունների հետևանքով ծայրահեղ խոցելի իրավիճակում հայտնված Սյունիքի մարզի Ներքին Հանդ, Շիկահող, Սրաշեն և ճակատեն, և Գեղարքունիքի մարզի Կուտական, Տրետուք, Ներքին Շորժա և Սոթք համայնքների բնակիչներին: Ընդհանուր թվով 459 ընտանիք (1565 անձ) ստացել է 150.000-ից 362.000 ՀՀ դրամ՝ ընտանիքի անդամների թվի հաշվարկով, ընդհանուր 124 208 000 ՀՀ դրամ:

Համապատասխանաբար՝ մեկ անձից բաղկացած ընտանիքին տրամադրվել է 150.000 ՀՀ դրամ, երկու անձից բաղկացած ընտանիքին՝ 215.000 ՀՀ դրամ, երեք անձից բաղկացած ընտանիքին՝ 264.000 ՀՀ դրամ, չորս անձից բաղկացած ընտանիքին՝ 313.500 ՀՀ դրամ, իսկ հինգ և ավելի անդամից բաղկացած ընտանիքներին՝ 362.000 ՀՀ դրամ: Ծրագրին նախորդել է կարիքների գնահատումը, որն իրականացվել է ԿԻՄԿ-ի կողմից՝ տեղական իշխանությունների համակարգմամբ: Այնուհետև ԿԻՄԿ և ՀԿԻԸ թիմերը գրանցել են նշված համայնքներում շահառու ընտանիքներին:

Այսպիսով, Հայկական Կարմիր խաչի ընկերությունն ընդհանուր առմամբ տրամադրել է մոտ 293 միլիոն ՀՀ դրամի՝ մոտ 742 000 ԱՄՆ դոլարի աջակցություն:

ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՇԱՐԺ



Հայկական Կարմիր խաչի
ընկերությունը Բնակչության
տեղաշարժի կառավարման
ուղղությամբ իր հանձնառությունների
շրջանակներում շարունակել է
գործունեությունը՝ ի նպաստ
փախստական, փախստականի նման
կարգավիճակ ունեցող, ապաստան
հայցող, այլ տեղաշարժված անձանց
իրավունքների պաշտպանության,
հումանիտար աջակցության և
ինտեգրման:



2022թ. ՅԿԽԸ-ն շարունակել է լայնածավալ աջակցություն ցուցաբերել 2020թ. Ղարաբաղյան հակամարտության սրացման հետևանքով Հայաստան տեղափոխված ընտանիքներին՝ սերտ համագործակցելով պետական և ոչ պետական գործընկերների և կառույցների հետ: Ընթացիկ աջակցությունը զուգորդվել է ռեսուրսների և ֆոնդերի շարունակական հայթայթման և կազմակերպության և գործընկեր կազմակերպությունների անձնակազմի կարողությունների զարգացման գործընթացներով: Աջակցության ծրագրերի հիմքում ընկած են եղել կարիքների շարունակական գնահատման արդյունքները, պետության կողմից մատնանշված խնդիրների արձագանքման անհրաժեշտությունը, սոցիալական իրավիճակի վատթարացման կանխարգելման անհրաժեշտությունը, հատուկ պաշտպանության կարիք ունեցող դեպքերի համար մասնագիտական արձագանքի կազմակերպումը:

ՄԱԿ-ի փախստականների գործակալության և Ավստրիական զարգացման համագործակցության ֆինանսավորմամբ իրականացված ծրագրերն ուղղված են եղել տեղահանված անձանց համար ընդունելության պայմանների բարելավմանը, դեպի ՀՀ տարածք մուտքի ապահովմանը, տնտեսական և սոցիալ-մշակութային ինտեգրմանը, սոցիալական պաշտպանությանը և առաջնային կարիքների հրատապ արձագանքին, հոգեբանական վիճակի բարելավմանը, երեխաների պաշտպանության հատուկ դեպքերի վարմանը, գենդերով պայմանավորված բռնությունների բացահայտմանն ու կանխարգելմանը, «Հատուկ կացարան» ՊՈԱԿ-ում պայմանների բարելավմանը, պետական կառույցների և այլ համագործակից կազմակերպությունների կարողությունների զարգացմանը, ԼՂ-ից տեղահանված անձանց պաշտպանության մոնիթորինգի միջոցով կարիքների բացահայտմանը, սոցիալական դեպքի վարման միջոցով կարիքների արձագանքմանը, կացարանների և միջավայրի պայմանների բարելավմանը, համայնքային խաղաղ համակեցության ապահովմանը, համայնքների զարգացմանը և այլն:

Ապաստան հայցողների և փախստականների համար իրականացվել է 12 տեղեկատվական հանդիպում՝ տեղահանված անձանց իրավունքների, փախստականի կարգավիճակի տրամադրման ընթացակարգերի, սոցիալական ծառայությունների հասանելիության, աշխատանքի տեղավորման, ՄԻԱԿ-ՁԻԱՀ-ի և թրաֆիքինգի կանխարգելման և այլ թեմաներով: Ընդհանուր առմամբ 225 ապաստան հայցող և փախստական մասնակցել է նշված հանդիպումներին:



ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի և անձնագրերի և վիզաների վարչության ներկայացուցիչների համար կազմակերպվել է 5 դասընթաց՝ 76 աշխատակցի մասնակցությամբ: 83 այց է իրականացվել սահմանային անցման ցամաքային կետեր և օդանավակայաններ: Ամսական մոնիթորինգ է իրականացվել «Հատուկ կացարան» ՊՈԱԿ-ում, որտեղ կատարվել են վերանորոգումներ և տրամադրվել է անհրաժեշտ գույք:

ՀԿԽԸ-ն 12 լեզուների տիրապետող 16 թարգմանիչների միջոցով ապահովել է 1262 ժամ և 365 էջ գրավոր թարգմանությունն ապաստան հայցողների և փախստականների համար:

Հոգեբանական ավելի քան 400 անհատական խորհրդատվություն է իրականացվել 60 փախստականների և ապաստան հայցողների համար:

Փախստական երեխաների պաշտպանության և գեղորով պայմանավորված բռնությունների կանխարգելման աշխատանքային խմբերի 6 հանդիպում է կազմակերպվել տարվա ընթացքում: Երեխաների պաշտպանության հատուկ 82 դեպքի վարում է իրականացվել: 137 երեխա ստացել են կրթության հասանելիությունն ապահովող նյութական աջակցություն:

Փախստական կանանց փոխաջակցման խմբի 4 հանդիպում է կազմակերպվել:

ԱՄՆ Միասնական սոցիալական ծառայության 68 ներկայացուցիչներ՝ սոցիալական աշխատողներ, վերապատրաստվել են և իրազեկվել փախստականների իրավունքների վերաբերյալ 4 դասընթացների ընթացքում:

Տնտեսական ինտեգրման աջակցություն է ստացել 257 ընտանիք՝ անասնապահության, կարի, մեքենաների վերանորոգման, խոհարարության, վարսահարդարման և այլ բազմաթիվ ոլորտներում գործունեություն ծավալելու և եկամուտ ստանալու նպատակով:

88 ապաստան հայցող և փախստական մասնակցել է հայոց լեզվի դասընթացներին, իսկ 432-ը մասնակցել են կազմակերպված 26 մշակութային միջոցառումների:

3500 ընտանիքի հետ իրականացվել է պաշտպանության մոնիթորինգ, իսկ 752 ընտանիք ներառվել է դեպքի վարման գործընթացում:



39 այցելություն է իրականացվել Կիլիկիա ավտոկայան՝ ԼՂ-ից տեղահանված անձանց վերադարձի մոնիթորինգի նպատակով:

ԼՂ-ից տեղահանված 301 անձանց համար կազմակերպվել են 20 խմբային հոգեբանական հանդիպումներ:

Աջակցություն է տրամադրվել 8 համայնքախոս կազմակերպության, որոնք ներառված են եղել ԼՂ-ից տեղահանված անձանց կարիքների արձագանքման գործում:



1262

ժամ
թարգմանություն



257

տնտեսապես
ինտեգրված
ընտանիք



3500

ընտանիքի հետ
իրականացվել է
պաշտպանության
մոնիթորինգ

Համայնքների և համայնքային կամավորների նախաձեռնությունների ֆինանսավորման շրջանակներում իրականացվել են 13 համայնքային զարգացման ծրագրեր՝ խաղահրապարակների կառուցում, մեծահասակների սենյակի կահավորում, դպրոցների սպորտային գույքի տրամադրում, մշակույթի տան ջեռուցում, երաժշտական դպրոցի գույքի տրամադրում, մշակույթի տան բեմի բարեկարգում և այլն:

1000 երեխա մասնակցել է երեխաների դիմակայունության բարձրացման ուղղված ծրագրային բազմաբնույթ միջոցառումներին:

COVID-19-ից և ԼՂ հակամարտությունից տուժած 1000 ընտանիք հումանիտար աջակցություն է ստացել՝ հիզդենիկ պարագաներ և սննդի փաթեթի տեսքով:

ԼՂ-ից տեղահանված և խոցելի տեղացի 200 ընտանիք օգտվել է բնակարանային վարձի տրամադրման ծրագրից:

ՈՐՈՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



Հայկական Կարմիր խաչի ընկերության Որոնում ծառայության գործունեությունն ուղղված է բնակչության տեղաշարժի արդյունքում կազմալուծված ընտանիքների վերամիավորմանը, պատերազմների, աղետների և հակամարտությունների հետևանքով անհայտ կորածների որոնմանը և գոհվածների շիրիմների վայրը հաստատող փաստաթղթերի հայտնաբերմանը, երկրորդ Համաշխարհային պատերազմի ընթացքում տարհանված, գերության մեջ և հարկադիր աշխատանքային գաղութներում գտնվելու փաստը հաստատող փաստաթղթերի որոնմանը և հատկացմանը:



Ընտանեկան կապերի վերականգնում (ԸԿԿ)

Չայկական Կարմիր խաչի ընկերությունը 2022 թվականի ընթացքում ստացել և բացել է 14 հայտ հետևյալ ուղղություններով՝ անհատների որոնում, ընտանեկան կապերի վերականգնման և սոցիալական վիճակի բարելավման համար անհրաժեշտ փաստաթղթերի որոնում և տրամադրում, գերեզմանների որոնում և գերեզմանի գոյության մասին փաստաթղթերի տրամադրում, որոնում և փաստաթղթերի տրամադրում, որոնք հաստատում են, որ անձը Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ենթարկվել է տարհանման, գերության, հարկադիր հեռանալու կամ հարկադիր աշխատանքի: Բացի նոր դեպքերից Որոնում ծառայությունը շարունակել է աշխատել նախորդ տարիների ընթացիկ դեպքերի վրա:

ՅԿԽԸ-ի Որոնում ծառայության անձնակազմի և կամավորների հմտություններն ու կարողությունները բարձրացնելու նպատակով 2022թ. նոյեմբերին կազմակերպվել է վերապատրաստման սեմինար «Վերականգնել ընտանեկան կապերն արտակարգ իրավիճակներում» թեմայով: Սեմինարի մասնակիցները վերապատրաստվել են, թե ինչպես արագ և արդյունավետ կազմակերպել ԸԿԿ-ը Չայաստանում աղետների դեպքում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ արտակարգ իրավիճակում կորցրած հարազատի ճակատագիրը պարզելը ընտանիքների համար ամենակարևորն է:

Ամփոփելով 2022 թվականը՝ տարեվերջին Որոնում ծառայությունը կազմակերպել է կլոր սեղան - հանդիպում պետական կառույցների շահագրգիռ կողմերի ներկայացուցիչների հետ: Հանդիպման հիմնական թեման ՅԿԽԸ Որոնում ծառայության գործունեության ներկայացումն էր՝ ընդգծելով համագործակցության կարևորությունը, քանի որ առանց պետական կազմակերպությունների հետ ճիշտ համագործակցության և վերջիններիս աջակցության հնարավոր չէ կազմակերպել ծառայության պատշաճ գործունեությունը:

2022 թվականի դեկտեմբերին Լաչինի միջանցքի իրավիճակի պատճառով Որոնում ծառայության ղեկավարն այցելել և տեղեկատվություն է հավաքել ԼՂ-ից առանց ուղեկցության երեխաների վերաբերյալ, որոնք շրջափակման պատճառով մնացել են Չայաստանում (Գորիս և Երևան):

Տարբեր պատճառներով Հայաստան ժամանած 45 երեխա՝ առանց ծնողների ուղեկցության, արգելափակվել է ՀՀ-ում և չի կարողացել միավորվել ընտանիքների հետ: Տեղեկատվություն է հավաքվել և տրամադրվել ԿԽՄԿ-ին՝ երեխաներին ընտանիքների հետ հետագա վերամիավորման համար:

2022 թվականին ՀԿԽԸ-ն գործիքներ և ռեսուրսներ ձեռք բերեց արտակարգ իրավիճակներում ԸՎԿ արձագանքման համար: Ներկայումս ՀԿԽԸ-ն իր տրամադրության տակ ունի ԸՎԿ շտապ օգնության հավաքածու՝ հարմարեցված կանխատեսելի համատեքստին, որը կարող է օգտագործվել արտակարգ իրավիճակների դեպքում Որոնում ծառայության գործունեությունը կազմակերպելու համար:

Տվյալների բազայի թարմացում

FLAnswer տվյալների բազայի լրացումը կարևոր գործիք է ՀԿԽԸ ԸՎԿ ընթացակարգերի համար: Դեռևս 2021 թվականին դեպքերի մուտքագրումը տվյալների բազա ամբողջությամբ ավարտվել է: 2022 թվականին շարունակվել է գործերի մուտքագրման գործընթացը, և նորաբաց գործերը մուտքագրվել են տվյալների բազա, իսկ ընթացիկ գործերը թարմացվել են ըստ անհրաժեշտության:

Անհայտ կորածների ընտանիքների սատարում

Լեռնային Ղարաբաղի հակամարտության 1990-ականներից հետո 4541 մարդ դեռևս անհայտ կորած է, և նրանցից 400-ի համար Հայաստանում որոնման հարցում է բացվել: ԿԽՄԿ պատվիրակությունը մի շարք գնահատումներ է անցկացրել և եզրակացրել, որ նույնիսկ մոտ 30 տարի անց անհայտ կորածների ընտանիքները դեռևս ունեն տնտեսական, իրավական, հոգեբանական և/կամ սոցիալական կարիքներ:

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը ԿԽՄԿ-ի ֆինանսական աջակցությամբ շարունակում է աջակցել անհայտ կորածների ընտանիքներին՝ հաղթահարելու անհետացման հոգեբանական և սոցիալական հետևանքները: Տարվա ընթացքում աջակցություն է ստացել 200 ընտանիք Շիրակից (13 ընտանիք), Գեղարքունիքից (23 ընտանիք), Վայոց ձորից (5 ընտանիք), Արմավիրից (41 ընտանիք), Լոռիից (22 ընտանիք), Տավուշից (14 ընտանիք), Սյունիքից (46 ընտանիք), Արարատից (36 ընտանիք): ՀԿԽԸ տարածքային մասնաճյուղերը կանոնավոր կապ են պահպանում նշված մարզերում բնակվող անհայտ կորածների ընտանիքների հետ: Անհրաժեշտության դեպքում կազմակերպվել են հատուկ հանդիպումներ համապատասխան մասնագետների հետ՝ շահառու ընտանիքներին սոցիալական, բժշկական և հոգեբանական ծառայություններ մատուցելու նպատակով:

ՀԿԽԸ Որոնում ծառայության պատասխանատուները մարզերում ստանալով Անհայտ կորածների ընտանիքներից հարցումներ՝ իրենց մարդասիրական կարիքների վերաբերյալ, նրանց ուղղորդել են ՀԿԽԸ-ի մարդասիրական օգնության ծրագրերին, ինչպես նաև՝ մարզերում գործող համապատասխան այլ կազմակերպություններ:

Օգոստոսի 30-ին՝ Անհայտ կորածների միջազգային օրը, ՀԿԽԸ-ն կազմակերպել է մի շարք միջոցառումներ ԼՂ հակամարտության 1990-ականների սրացումից հետո անհայտ կորածների ընտանիքների համար Սյունիքի, Վայոց ձորի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Տավուշի, Լոռու և Շիրակի մարզերում:

Միջոցառումները տարբեր էին՝ ուխտագնացություն դեպի Սարդարապատ, Էջմիածին և Սևանավանք, ծառատունկ, այցելություն Անհայտ կորածների հուշարձան:

Ամառորին ընդամաք ՀԿԽԸ-ն՝ ԿԽՄԿ-ի աջակցությամբ, երևանում և ՀՀ մարզերում ԿԽՄԿ-ի կողմից գրանցված ԼՂ հակամարտության 2020 թվականի սրացման հետևանքով անհայտ կորածների երեխաներին ամառորյա նվերներ է տրամադրել (127 ծանրոց):

Տարվա ընթացքում
աշակցությունն է ստացել
190 ընտանիք



13

ընտանիք Շիրակից



46

ընտանիք Սյունիքից



14

ընտանիք Տավուշից



5

ընտանիք Վայոց ձորից



13

ընտանիք Գեղարքունիքից



41

ընտանիք Արմավիրից



22

ընտանիք Լոռիից



36

ընտանիք Արարատից

ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ



ՀԿԻՇ Առաջին օգնության (ԱՕ) ուսումնամեթոդական կենտրոնն ԱՕ գիտելիքներ և հմտություններ է տարածում բնակչության լայն շերտերի և տարբեր տարիքային և մասնագիտական խմբերի շրջանում, իրականացնում է ԱՕ սպասարկում զանգվածային միջոցառումների ժամանակ, ինչպես նաև կազմակերպում է ծավալուն գործունեություն՝ ուղղված աճող սերնդի անվտանգ վարքագծի ձևավորմանը:
Կենտրոնն իրականացնում է դասընթացներ Առաջին օգնության Գլոբալ խորհրդատվական կենտրոնի չափորոշիչներին համապատասխան (GFARC):



Միջազգային որակավորման ատեստավորում

ՀԿԽԸ-ն 2022 թվականին անցել է Առաջին օգնության միջազգային հերթական ատեստավորումը (GFARC, IFRC), որը վավեր է 5 տարի ժամկետով և հավաստում է, որ ՀԿԽԸ ԱՕ ուսուցումն իրականացվում է Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի (ԿԻՎՄՄՖ) Առաջին օգնության, վերակենդանացման և կրթության 2020 թ. միջազգային չափանիշներին համապատասխան:

Բժիշկների և բուժքույրերի համար մշակված ՀԿԽԸ ԱՕ ծրագրերը հաստատվել են ՀՀ Առողջապահության նախարարի հրամանով, և առողջապահության ոլորտի աշխատակիցները՝ ՀԿԽԸ ԱՕ դասընթացն անցնելուց հետո, ստացել են շարունակական մասնագիտական զարգացման 6 կրեդիտ: Ուսուցիչների վերապատրաստման համար նախատեսված ՀԿԽԸ ԱՕ մոդուլը նույնպես հաստատվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից:

ԱՕ դասընթացներ

2022 թվականին իրականացվել են դասընթացներ ՀԿԽԸ կամավորների, Տավուշի, Վայոց Ձորի, Սյունիքի, Արարատի, Գեղարքունիքի սահմանամերձ և հեռավոր համայնքների անդամների (բնակիչներ, ուսուցիչներ, առաջնային բժշկական օգնության և սպասարկման ոլորտի աշխատակիցներ, դպրոցականներ և այլն), ԼՂ հակամարտության հետևանքով տեղահանվածների և նրանց հյուրընկալող անձնակազմի, Տավուշի, Վայոց Ձորի և Սյունիքի հրշեջ-փրկարարների և Տավուշի սահմանամերձ համայնքների ԱԻՆ քաղաքացիական պաշտպանության թիմերի, տարբեր կազմակերպությունների աշխատակիցների համար:



Ընդհանուր առմամբ, 2022 թվականի ընթացքում ԱՕ ոլորտում իրենց գիտելիքներն ու հմտություններն են թարմացրել 5000 մարդ:

Մասնավորապես՝ դասընթացներ և սեմինարներ են իրականացվել Կենտրոնական Բանկի, Ամերիաբանկի, Վայոց Ձորի մարզպետարանի, Առողջապահության ազգային ինստիտուտի, Գյումրու շուրջօրյա խնամքի կենտրոնի, «Չվարթնոց» օդանավակայանի, ՄԱԿ-ի գրասենյակի, Եվրոպայի խորհրդի գրասենյակի, Նիդերլանդների դեսպանատան, Բրիտանական դեսպանատան, Գերմանական զարգացման գործակալության, Ավստրիական զարգացման գործակալության, Քեմբրիջ դպրոցի, «Բժիշկներ առանց սահմանների», «Դասավանդիր Հայաստան», «ԿՈԿԱ-ԿՈԼԱ Հելլենիկ», «Գրանդ Սպորտ», «Մուլտի Վելնես կենտրոն», «Իբիս Երևան Սենթր», «Հոլիդեյ Ինն» և մի շարք այլ կազմակերպությունների աշխատակիցների համար:

ԱՕ դասընթացներ 33 սահմանամերձ համայնքների բնակիչների համար

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԻՄԿ) հետ համագործակցության շրջանակներում իրականացվել են «Առաջին օգնության հիմունքներ» թեմայով դասընթացներ Տավուշի մարզի 22 (Բաղանիս, Բարեկամավան, Բերդավան, Դովեդ, Կոթի, Ոսկեպար, Ոսկևան, Այգեհովիտ, Ագատամուտ, Բերքաբեր, Կիրանց, Սարիգյուղ, Սևքար, Ծաղկավան, Վազաշեն, Այգեծոր, Այգեպար, Չինարի, Չորաթան, Մովսես, Ներքին Կարմիր Աղբյուր, Պառավաքար), Վայոց Ձորի 10 (Ջերմուկ, Վայք, Չառիթափ, Բարձրունի, Խնձորուտ, Նոր Ազնաբերդ, Արենի, Խաչիկ, Չիվա, Ելփին), Արարատի 3 (Յերասխավան, Տիգրանաշեն, Չանգակատուն), Սյունիքի 29 (Դավիթ Բեկ, Կաղնուտ, Ուժանիս, Եղվարդ, Ագարակ, Գեղանուշ, Ճակատեն, Ճիկահող, Սրաշեն, Ներքին Հանդ, Ծավ, Ազնակ, Դիցմայրի, Սյունիք, Նոնածոր, Կարճան, Շուռնուխ, Որոտան, Տեղ, Խնձորեսկ, Արավուս, Խնածախ, Կոռնիծոր, Վաղատուր, Ներքին Խնձորեսկ, Տաթև, Ճինուհայր, Խոտ, Քարահունջ), Գեղարքունիքի 11 (Թթուջուր, Վահան, Գեղամասար, Սոթք, Ազատ, Կուտ, Նորաբակ, Վարդենիս, Մեծ Մարիկ, Մարտունի, Այրք) սահմանամերձ համայնքներում: Դասընթացներին մասնակցել է 1024 անձ:



ԱՕ դասընթացներ ՅՅ սահմանամերձ համայնքների բուժանձնակազմի համար

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) հետ համագործակցության շրջանակներում իրականացվել են «Առաջին օգնության հիմունքներ» թեմայով դասընթացներ վերոհիշյալ համայնքների, ինչպես նաև Նոյեմբերյան, Իջևան, Բերդ, Եղեգնաձոր և Արարատ քաղաքների ամբուլատորիաների և բուժկետերի աշխատակիցների համար: Դասընթացներին մասնակցել է 191 բուժաշխատող:

ԱՕ դասընթացներ ՅՅ Տավուշի, Գեղարքունիքի, Արարատի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի կամավորների համար

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) հետ համագործակցության շրջանակներում իրականացվել է «Առաջին օգնության հիմունքներ» թեմայով 5 դասընթաց Տավուշի, Գեղարքունիքի, Սյունիքի, Արարատի և Վայոց Ձորի 75 կամավորների համար:

ԱՕ հրահանգիչների վերապատրաստում

2022 թվականին Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) հետ համագործակցության շրջանակներում իրականացվել են ՅՅ մարզերում ԱՕ հրահանգիչների վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակցել է ՅԿԽԸ 21 ԱՕ հրահանգիչ:

2022 թվականի ընթացքում ԱՕ ոլորտում գիտելիքներն ու հմտությունները թարմացրել է 5000 մարդ

ԱՕ դասընթացներ Հայ-ռուսական մարդասիրական արձագանքման կենտրոնի փրկարարների համար

Հայ-ռուսական մարդասիրական արձագանքման կենտրոնի հետ համագործակցության շրջանակներում իրականացվել են ԱՕ դասընթացներ Արարատի, Սյունիքի, Լոռու, Շիրակի, Կոտայքի, Արմավիրի և Արագածոտնի մարզերի 100 փրկարարների համար:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության, Կարմիր խաչի միջազգային կոմիտեի և Հայկական Կարմիր խաչի ընկերության /ԱԻՆ-ԿԻՄԿ-ՀԿԻՇ/ համագործակցություն

ԱԻՆ-ԿԻՄԿ-ՀԿԻՇ համագործակցության շրջանակներում իրականացվել են «Առաջին օգնության հիմունքներ» և «Աճյունների հետ վարվելակարգի կանոններ» թարմացնող դասընթացներ՝ Տավուշի մարզի 12 (Բերդավան, Դովեղ, Կոթի, Ոսկան, Ագատամուտ, Սարիգյուղ, Այգեպար, Չինարի, Չորաթան, Մովսես, Ներքին Կարմիր Աղբյուր և Պառավաքար) սահմանամերձ համայնքների Քաղաքացիական պաշտպանության թիմերի 200 անդամների, ինչպես նաև Տավուշի, Վայոց Ձորի և Գեղարքունիքի 47 հրշեջ-փրկարարների համար: Յուրաքանչյուր թիմի տրամադրվել են ԱՕ պարագաներ և վիրակապական նյութեր՝ ԱՕ պայուսակների և արկղիկների պարունակությունը թարմացնելու համար:

Առաջին օգնության ուսուցման և ծառայության համազգային համակարգի ստեղծում

2022 թվականից սկսած ՀԿԻՇ-ն իրականացնում է «Առաջին օգնության ուսուցման և ծառայության համազգային համակարգի ստեղծում» 5-ամյա ծրագիրը՝ Ներդրումային միության ֆոնդի (NSIA) և Շվեյցարական Կարմիր խաչի աջակցությամբ:

Ծրագրի շնորհիվ ՀԿԻՇ-ն հզորացնում է իր կարողությունները ԱՕ ուսուցման և ծառայության ոլորտում՝ ավելացնելով ԱՕ հրահանգիչների թիվը (պատրաստվել են 10 երկրորդ կարգի հրահանգիչներ), հիմնելով ԱՕ ուսումնական կենտրոններ Երևանում և Հայաստանի մարզերում (2 կենտրոն վերանորոգվել է և կահավորվել), զարգացնելով ԱՕ վճարովի ուսուցման և ծառայության համակարգը (մշակվել են 6 ուսուցման մոդուլներ, ներդրվել է դասընթացների առցանց գրանցման էջ, ձեռք են բերվել 12 վարժասարքեր/մանեկեններ մարզային մասնաճյուղերի համար և վաճառքի համար նախատեսված 550 ԱՕ լրակազմ արկղիկներ), մինևոյն ժամանակ բարելավելով ԱՕ առնչվող իրավական դաշտը, ինչպես նաև բարձրացնելով հանրության իրազեկությունը:

Արտակարգ իրավիճակներում առողջապահական խնդիրների նկատմամբ տեղական համայնքների դիմակայունության բարձրացում Հարավային Կովկասում

Կարմիր խաչի և կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի (ԿԻԿՄՄՏ) հետ համագործակցության շրջանակներում, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) ֆինանսավորմամբ, Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվել է «Արտակարգ իրավիճակներում առողջապահական խնդիրների նկատմամբ տեղական համայնքների դիմակայունության բարձրացում Հարավային Կովկասում» ծրագիրը, որում ներգրավված են եղել ՀԿԻՇ 40 առաջնորդ կամավորներ և 195 համայնքային կամավորներ Սյունիքի, Վայոց Ձորի, Տավուշի, Լոռու, Շիրակի մարզերից և Երևանից:



Կամավորները վերապատրաստվել են՝ իրենց համայնքներում աղետների և ճգնաժամերի առողջության հետ կապված հետևանքներին նախապատրաստվելու և արձագանքելու նպատակով: Վերապատրաստումներն իրականացվել են աղետների կառավարման և արտակարգ իրավիճակներում առողջության պահպանման ուղղությամբ՝ հատուկ ուշադրություն դարձնելով առողջության համաճարակային/համավարակային պատրաստվածությանը, արձագանքմանը և վերահսկմանը, սանիտարահիգիենիկ միջոցառումներին, ԱՕ և հոգեբանական առաջին օգնությանը: Վերապատրաստված կամավորներն ուղղակիորեն կրթել են թիրախային մարզերի 76 տեղական համայնքների ավելի քան 60 743 և անուղղակիորեն՝ 182 229 անդամի: Իրականացվել են նաև ԱՕ ներածական դասընթացներ 15 991 դպրոցահասակ երեխաների համար:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) հայաստանյան գրասենյակի հետ համագործակցությամբ իրականացվել է «Հայաստանում հակամարտությունից տուժած համայնքներում Քովիդ-19 համավարակի և այլ առողջապահական արտակարգ իրավիճակների ժամանակ առաջին օգնության դասընթացների տրամադրում» ծրագիրը:

Ծրագրի շրջանակներում Սյունիքի, Վայոց ձորի, Գեղարքունիքի և Տավուշի մարզերի 34 համայնքների 727 անդամների համար անցկացվել են «Առաջին օգնության հիմունքներ» թեմայով դասընթացներ: 1000 օրինակով տպագրվել և տրամադրվել է ՀԿԽԸ ԱՕ ձեռնարկը, ինչպես նաև այլ ուսումնական նյութեր:



2563 անհատական ԱՕ պայուսակներ և 76 ԱՕ արկղեր բաշխվել են որպես ՅԿԽԸ ներդրում՝ հիմնականում թիրախային համայնքների խնդրանքով: Թիրախային համայնքների բնակիչներին տրամադրվել է ԱՕ, սանիտարահիգիենիկ միջոցառումների, համաճարակների և համավարակների (ներառյալ՝ Քովիդ-19-ի և առողջապահական այլ արտակարգ իրավիճակների) մասին տեղեկատվություն:

ԱՕ ծառայություն

2022 թվականին ՖԻՏԱ և ՈԻԵՖԱ շրջանակներում կայացած 50-ից ավելի ֆուտբոլային խաղերի ընթացքում ՅԿԽԸ ԱՕ խմբերն իրանացրել են ԱՕ ծառայություն:

Հանրային միջոցառումներ

Արյան դոնորի համաշխարհային օրվա և Առաջին օգնության համաշխարհային օրվա կապակցությամբ կազմակերպվել են հանրային միջոցառումներ երևանում և մարզերում, որոնց ժամանակ հանրային վայրերում տեղադրվել են ԱՕ կայաններ, տրամադրվել է տեղեկատվություն ԱՕ վերաբերյալ:

ՅԿԽԸ ԱՕ բաժինը մասնակցել է ՀՀ ԱԻՆ կողմից դպրոցներում, ուսումնական հաստատություններում իրականացվող վարժանքներին:

Մեդիա համագործակցություն

ԱՕ թիմը նկարահանվել է ՀՀ հեռուստաընկերության «Առողջ ապրելակերպ» և «Շանթ» հեռուստաընկերության «Բուժ-Ինֆո» ավելի քան 30 հաղորդումներում:



ՍՈՑԻԱԼ - ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ



**Հայկական Կարմիր խաչի
ընկերությունը, նպատակ ունենալով
աջակցել պետական համակարգին՝
նվազեցնելու սոցիալապես անապահով
մարդկանց խոցելիությունը և բարելավել
համայնքների բնակչության
առողջական վիճակը, լայնածավալ
գործունեություն է ծավալում
սոցիալական աջակցության և
առողջապահության ոլորտներում:**



Ինտեգրացված տնային խնամքի ծառայություններ

2022թ. ՉԿԻՇ Հարունակել է ինտեգրացված տնային խնամքի ծառայություններ մատուցել 33 Լոռու, Ճիրակի և Վայոց Ձորի մարզերում:
 Ծառայություն ստացողները վերունշյալ երեք մարզերի տարեց, քրոնիկական հիվանդություն և (կամ) հաշմանդամություն ունեցող անձինք են, որոնք ընտրվել են մանրամասն անհատական կարիքի գնահատման հիման վրա:

Ծրագրի շահառուների խնամքն իրականացնում են՝

- 1** խնամքի բուժքույրերը՝ երեք մարզում 14 բուժքույր,
- 2** տնային խնամողները՝ յուրաքանչյուր մարզում 35 տնային խնամող,
- 3** կամավորները՝ Լոռու մարզում՝ 61, Ճիրակի մարզում՝ 41, Վայոց Ձորի մարզում՝ 20, որոնք անցել են համապատասխան դասընթացներ և վերապատրաստումներ:

Ծառայությունները տրամադրվել են ոչ միայն շրջկենտրոններում, այլև հետևյալ քաղաքներում՝ Սպիտակ, Ալավերդի՝ Լոռու մարզում, Արթիկ, Մարալիկ՝ Ճիրակում:

Խնամվողների խնամքը իրականացվել է վերջիններիս տներում, խնամք տրամադրող անձնակազմի կողմից՝ համաձայն նրանց անհատական խնամքի ծրագրերի, որոնք մշակվել են խնամվողների անհատական կարիքների գնահատման հիման վրա, արդյունքում՝ խնամվողներին լիովին տրամադրվել են իրենց անհատական ծրագրերում սահմանված ծառայությունները: Ըստ սահմանված աշխատանքային պլանի, իրականացվել է՝

- սոցիալ-առողջապահական խնամքի տրամադրում,
- կենցաղային օգնություն և սպասարկում,
- կամավորների այցելություններ,
- սոցիալական աշխատողի այցելություն,
- հոգեբանի խորհրդատվություն, սոցիալ-հոգեբանական աջակցություն:

Ծառայությունները հստակ տարանջատված են խնամք իրականացնող երեք խմբերի համար: Մասնավորապես, բուժքույրերի կողմից իրականացվում են ներարկումներ՝ ըստ տեղամասի բժշկի նշանակման, մաշկի, լորձաթաղանթների խնամք, ատամների, բերանի խոռոչի խնամք, պառկելախոցերի կանխարգելում ու մշակում, հիվանդի շարժողունակությունը վերականգնելու նպատակով հատուկ վարժությունների, մերսումների իրականացում և այլն: Տնային խնամողների կողմից տրամադրվում է աջակցություն կենցաղային հարցերում, մասնավորապես՝ տան մաքրում, սննդի պատրաստում, աջակցություն սնունդ ընդունելիս: Կամավորների կողմից մատուցվող ծառայությունները հիմնականում ներառում են այցելություններ շահառուներին, գրույցներ նրանց հետ, ընթերցանություն, ուղեկցում խանութ, դեղատուն, աջակցություն կոմունալ վճարումների կատարման, փաստաթղթերի լրացման ընթացքում և այլն:

Անհատական կարիքից ելնելով՝ շահառուները ստանում են նաև անվասայլակներ, քայլակներ, հակապարկելախոցային բարձեր և ներքնակներ, ձեռնափայտեր, այլ անհրաժեշտ պարագաներ: Բոլոր երեք խնամք իրականացնողները, ծառայության մատուցմանը զուգահեռ, տրամադրում են նաև սոցիալ-հոգեբանական աջակցություն:

Խնամքն իրականացվում է տեղամասային պոլիկլինիկաների հետ սերտ համագործակցությամբ, տեղամասային բժշկի անմիջական հսկողությամբ, անհրաժեշտության դեպքում նեղ մասնագետների ներգրավմամբ: 2022 թվականի ավարտին ծառայությունը տրամադրվել է 520 շահառուի: 2022 թվականին ԶԿԽԸ-ն շարունակել է տնային խնամքի տրամադրումը համավճարի և վճարովի սկզբունքներով:

Ակտիվ երկարակեցություն

Ակտիվ երկարակեցություն բաղադրիչի շրջանակներում ԶԶ Շիրակի, Լոռու և Վայոց Ձորի մարզերում ստեղծվել ու գործում են տարեցների Ակտիվ երկարակեցության 31 Նախաձեռնող խումբ, որոնցում ներգրավված են մոտ 420 տարեցներ (225 կին և 195 տղամարդ):

Մասնակցության վրա հիմնված ակտիվ երկարակեցության շնորհիվ ավելացել է համայնքային կյանքում ներգրավված տարեց անձանց թիվը և նրանց շփումները, այսինքն, խթանվել է տարեցների մասնակցությունը համայնքային կյանքի տարբեր ոլորտներում: ԶԿԽԸ-ն ապահովել է Նախաձեռնող խմբերի ուսուցանումը, կարողությունների զարգացումը և հնարավորություն է ընձեռել ծրագրային առաջարկով դիմել փոքր դրամաշնորհներ ստանալու՝ հետաքրքիր նախաձեռնությունները կյանքի կոչելու համար:

Խարանի և խտրականության նվազեցում և սոցիալ-հոգեբանական աջակցություն

2022 թվականին ԶԿԽԸ-ն շարունակել է ԶԶ առողջապահության նախարարության Թոքաբանության ազգային կենտրոնի (ԹԱԿ) հետ համագործակցությամբ իրականացնել «Խարանի և խտրականության նվազեցում և սոցիալ-հոգեբանական աջակցություն» ծրագիրը, որի թիրախ են հանդիսանում բոլոր ՏԲ հիվանդները արտահիվանդանոցային փուլում:



ՏԱԿ ՊՈԱԿ-ի հետ համագործակցության շրջանակներում ՀԿԽԸ-ին տրամադրվել է ամսական տեղեկատվություն՝ հիվանդանոցային փուլն ավարտած և ամբուլատոր փուլում բուժում սկսող 413 հիվանդների վերաբերյալ:

Առողջության պահպանման առաջնային օղակի, մասնավորապես տուբերկուլյոզի ախտորոշմամբ և բուժմամբ զբաղվող բուժանձնակազմի հետ սերտ համագործակցություն է ստեղծվել, որի շրջանակներում ՏԲ կաբինետների կողմից տրամադրվել են բուժումը ամբուլատոր փուլում սկսող, բուժման ցածր հետևողականություն կամ խախտման միտում հիվանդների մասին տեղեկատվություն, որոնց հետ աշխատանքներ են իրականացրել ՀԿԽԸ հոգեբանները, սոցիալական աշխատողներն ու կամավորները: Հանդիպումներ են կազմակերպվել հիվանդների հետ, սոցիալ-հոգեբանական և հոգեբանական աջակցություն է տրամադրվել Նրանց՝ շեշտադրելով բուժմանը հետևողական լինելու կարևորությանը: Այցերի, խորհրդատվությունների վերաբերյալ վարվել է էլեկտրոնային շտեմարան: Բուժումը բարեհաջող ելքով ավարտած հիվանդների համար կազմակերպվել են «վերածնունդի» տոնակատարություններ:

Շաքարային դիաբետի կանխարգելում ու խնամք տարեցների շրջանում

2022 թվականի ընթացքում ՀՀ Արարատի, Արագածոտնի և Գեղարքունիքի մարզերում իրականացվել է Շաքարային դիաբետի կանխարգելում և խնամք տարեցների շրջանում ծրագիրը: Թիրախային մարզերի 48 համայնքներում (16 յուրաքանչյուր մարզում) ձևավորվել են շաքարային դիաբետի հիվանդներից կազմված 48 ինքնօգնության խմբեր, որոնք ստացել են անհրաժեշտ գիտելիքներ շաքարային դիաբետի կառավարման, ճիշտ սննդակարգի և ընդհանրապես առողջ ապրելակերպի վերաբերյալ: Դասընթացներ և սեմինարներ են իրականացվել 90 բժշկի և 84 բուժքրոջ համար՝ վերջիններիս ուշադրությունը կենտրոնացնելով շաքարային դիաբետի խնդիրներին:

ՉԿԽԸ 126 կամավորների անմիջական մասնակցությամբ ձևավորվել են Առողջ երկարակեցության խմբեր, որոնք ներգրավվել են առողջ ապրելակերպի ջատագովմանը, միջոցառումների և արշավների կազմակերպմանը: Խմբերի մասնակիցները, դասընթացներին մասնակցելուց հետո ակտիվորեն ջատագովել են իրենց համայնքներում առողջ ապրելակերպի, ճիշտ և առողջ սննդակարգի, ֆիզիկական ակտիվության և սոցիալական ներառվածության կարևորության մասին:



Դասընթացներ և սեմինարներ են իրականացվել 90 բժշկի և 84 բուժքրոջ համար

Գյումրու շուրջօրյա խնամքի կենտրոն

2022թ. ՉԿԽԸ շարունակել է Գյումրու շուրջօրյա խնամքի կենտրոնի կառավարումը՝ նպատակ ունենալով կենտրոնի տարածքում ապահովելու մինչև 160 խնամվող անձանց կացության բարենպաստ միջավայր՝ ապահովելով պատշաճ խնամք, որակյալ սնունդ, համապատասխան առողջապահական, սոցիալ-հոգեբանական և այլ անհրաժեշտ ծառայություններ: Ինչպես նախորդ տարիներին, ընթացիկ տարում ևս վերանորոգման աշխատանքներ են ընթացել Կենտրոնում, մասնավորապես վերանորոգվել է միջանցքը և միջոցառումների դահլիճը, հնարավորություն ընձեռելով շահառուներին առավել ակտիվ մասնակցելու սոցիալական տարաբնույթ միջոցառումներին, ժամանցը կազմակերպելու՝ ըստ իրենց նախասիրությունների, և այլն: Ընդհանուր առմամբ 2022 թվականի ընթացքում իրականացվել է 148 մլն դրամից ավելի ներդրում՝ վերանորոգման և կահավորման համար:

2022 թ.-ին ՉԿԽԸ-ն Գյումրու շուրջօրյա խնամքի կենտրոնում շարունակել է իրականացնել «Աշխատելով միասին հանուն որակյալ խնամքի, բարեկեցության և արժանապատիվ կյանքի» ծրագիրը, Ավստրիական Կարմիր խաչի հետ համագործակցությամբ և Ավստրիական զարգացման համագործակցության ֆինանսավորմամբ:

Ծրագրի նպատակն է բարելավել ՉԿԽԸ Գյումրու շուրջօրյա խնամքի կենտրոնի բնակիչների ինտեգրացված խնամքի և սոցիալական ծառայությունների որակը: Խնամքի ծառայությունների բարելավմանն ուղղված մի շարք միջոցառումներ են իրականացվել, որոնք կրում են շարունակական բնույթ: Խնամք իրականացնող անձնակազմի համար կարողությունների զարգացման նպատակով մի շարք դասընթացներ են կազմակերպվել: Ծրագրում ընդգրկված թվով 25 կամավորներ, մասնագիտական անձնակազմի անմիջական ղեկավարության և վերահսկողության ներքո, ամենօրյա աջակցություն են ցուցաբերել ՉԿԽԸ Գյումրու շուրջօրյա խնամքի կենտրոնի խնամքի թիմին և շահառուներին, այդ թվում նաև հաղորդակցվելու, գրուցելու, ընթերցանության և այլ հարցերում:



Ծրագրի շրջանակներում կենտրոնում գործող Ակտիվ երկարակեցության խմբերին տրամադրվել են փոքր դրամաշնորհներ՝ իրենց նախաձեռնությունները կյանքի կոչելու համար:

Արձագանք Covid -19 համավարակին

2022 թ.-ին ՀԿԽԸ-ն շարունակել է մնալ Covid-19 համավարակի արձագանքման առաջնագծում, իրականացնելով համավարակին դիմակայելու և արձագանքման գործողություններ: ՀԿԽԸ-ն իր կամավորների ցանցով և անձնակազմով շարունակել է ակտիվորեն ներգրավված լինել ռիսկի հաղորդակցության և իրազեկվածության բարձրացման ուղղված աշխատանքներում, և տեղեկատվություն է տրամադրել հիվանդության կանխարգելման, վարքագծային կանոնների և պատվաստումների վերաբերյալ: Իրազեկման գործընթացներում ներգրավված են եղել նաև տարբեր համայնքներում ստեղծված և գործող Ակտիվ և Առողջ երկարակեցության խմբերը, կազմված տարեցներից: Հավասարը հավասարի սկզբունքով՝ նրանք իրազեկել են տարեց բնակչությանը իրենց համայնքներում, կազմակերպել միջոցառումներ և քննարկումներ:

ՀԿԽԸ գործունեությունը հոգեկան առողջության և հոգեւնդիալական աջակցության ոլորտում

2022թ.-ին ՀԿԽԸ-ի գործունեությունը հոգեկան առողջության պահպանման և հոգեւնդիալական աջակցության ոլորտում ուղղված է եղել առավելապես «Սուրմալու» տոնավաճառի պայթյունից, սեպտեմբերի 13-14-ի ռազմական գործողություններից, Covid-19 համավարակից տուժած բնակչության աջակցությանը:



2022 թվականին ՀԿԽԸ-ն՝ ԿԽՄԿ-ի հետ, համատեղ Սյունիքի, Տավուշի և Գեղարքունիքի մարզերում իրականացրել է «Հոգեկան առողջության վերականգման և հոգեւոցիալական աջակցության ծրագիրը»՝ նպատակ ունենալով բարձրացնել սահմանամերձ համայնքների և ԼՂ-ից տեղահանված բնակիչների հոգեբանական դիմակայունությունը: Իրականացվել է կարիքների գնահատում, քարտեզագրվել են ծրագրի թիրախային համայնքներում առկա հոգեկան առողջության և հոգեւոցիալական աջակցության ծառայություններ մատուցող կազմակերպությունները:

Վերապատրաստվել է 17 խորհրդատու և 3 համակարգող վերոնշյալ համայնքներից և ծրագրի իրականացման ողջ ընթացքում նրանց համար անցկացվել են շարունակական տեխնիկական խորհրդատվություն, սուպերվիզիոն առկա և առցանց հանդիպումներ: Խորհրդատուների կողմից տրամադրվել է հոգեբանական աջակցություն անհատական և խմբային խորհրդատվությունների միջոցով, հոգեկան առողջության հետ կապված առավել լուրջ խնդիրների դեպքում իրականացվել են ուղղորդումներ այլ մասնագիտացված ծառայությունների: Սյունիքի, Տավուշի և Գեղարքունիքի սահմանամերձ տարբեր համայնքներում իրականացվել են հոգեկրթման, զգայունացման, տեղեկատվական սեսիաներ առողջապահական ոլորտի աշխատակիցների, ուսուցիչների, տեղական ինքնակառավարման մարմինների և ՀԿ-ների ներկայացուցիչների շրջանում՝ նպատակ ունենալով նվազեցնել համայնքներում առկա խարանդ և բարձրացնել իրազեկվածությունը հոգեկան առողջության և հոգեւոցիալական աջակցության վերաբերյալ:

Վերոնշյալ ծրագրի շրջանակներում 1200 շահառու ստացել է հոգեբանական աջակցություն: Իրականացվել է թվով 25 տեղեկատվական և 25 փոխաջակցման խմբային հանդիպում:

Արտակարգ իրավիճակով պայմանավորված տնայցերի շնորհիվ 101 հոգի ստացել է հոգեւոցիալական աջակցություն:

Հայկական Կարմիր խաչի ընկերության հոգեբաններն իրականացրել են անհատական հոգեբանական աջակցության 423 ծառայություն տեղահանված (ապաստան հայցող, փախստական, փախստականի նման կարգավիճակով անձանց համար) ՄԱԿ ՓԳՅ-ի կողմից ֆինանսավորվող «Փախստականների պաշտպանություն և ինտեգրում» ծրագրի շրջանակներում: 2022թ հունվարից դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում տրամադրվել է հոգեբանական աջակցության անհատական ծառայություն, որը ներառել է հոգեթերապիա, հոգեբանական խորհրդատվություն և հոգեսոցիալական աջակցություն:



3245 շահառու ստացել է հոգեբանական աջակցություն

Նույն ծրագրի շրջանակներում 301 շահառու մասնակցել է խմբային հոգեբանական աջակցության հանդիպումների, որոնք իրականացվել են ՀԿԽԸ հոգեբանների կողմից ՀՀ հետևյալ մարզերում՝ Երևան, Կոտայք, Արմավիր, Վայոց Ձոր, Արարատ, Արագածոտն, Տավուշ, Գեղարքունիք: Շահառուներից 217-ը եղել է ԼՂ-ից տեղահանված, իսկ մյուս 84-ը՝ այլ երկրներից:

«Դիմակայունություն Covid-19-ին Հայաստանում ու Վրաստանում, և արձագանք Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը» ծրագրի շրջանակներում 634 շահառու մասնակցել է խմբային հոգեբանական աջակցության հանդիպումների Երևանում, Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Տավուշի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերում:

162 մասնակից եղել է տեղացի, իսկ 472 մասնակից՝ ԼՂ-ից տեղահանված:

2022 թվականին ՀԿԽԸ մասնագիտացված հոգեբանների կողմից իրականացվել է Թեժ գծի վարում, որն իր մեջ ներառում է կարիքների գնահատում, առցանց հոգեբանական առաջին օգնության, անհրաժեշտ տեղեկատվության տրամադրում և ուղղորդում այլ ծառայությունների:

2022 թվականին Հայկական, Վրացական և Ավստրիական Կարմիր խաչի ընկերությունների, Ավստրիական Ինսբրուքի համալսարանի հետ համագործակցությամբ իրականացվել է «Խթանել գիտելիքն ու համագործակցությունը համավարակի ժամանակ օգնողների հոգեկան առողջության և հոգեսոցիալական աջակցության համար» ծրագիրը: Ծրագրի շրջանակներում բացահայտվել են համավարակի ժամանակ օգնություն տրամադրողների հոգեբանական կարիքները, նրանց վրա համավարակի հոգեբանական ազդեցությունը և տրամադրվել է անհրաժեշտ աջակցություն:

Ընդլայնվել է հոգեկան առողջության և սոցիալ-հոգեբանական աջակցություն ցուցաբերող գործընկերության շրջանակը: Ստեղծվել է who-cares.pss հարթակը՝ գրադարանը, որտեղ տեղադրված են Covid - 19 համավարակի ժամանակ առաջնագծում աշխատող բժիշկների, բուժքույրերի, հոգեբանների, կամավորների պատմությունները, լավագույն փորձը՝ սթրեսի հաղթահարման միջոցների մասին, հոգեկան առողջության և սոցիալ-հոգեբանական ոլորտին վերաբերող նյութեր, ուղեցույցներ, հարցազրույցներ:



Օգոստոսի 14-21-ը ՀԿԽԸ 6 հոգեբաններից բաղկացած թիմը հոգեբանական աջակցություն է տրամադրել «Սուրմալու» տոնավաճառի տարածքում տեղի ունեցած պայթյունից և բռնկված հրդեհից տուժած ավելի քան 150 անձի՝ տուժածների հարազատներին, ընկերներին, փրկարարներին, քաղաքացիներին և փրկարարական աշխատանքներին մասնակցող կամավորներին:

Սեպտեմբերի 13-14-ի ռազմական գործողությունների հետևանքով Սյունիքի, Վայոց ձորի, Գեղարքունիքի մարզերում տուժած անձանց, ընտանիքներին տրամադրվել է հոգեբանական և հոգեառաջնություն աջակցություն, ընդհանուր՝ 481 անձի:

2022թ. դեկտեմբեր ամսին ՀԿԽԸ հոգեբանները հոգեառաջնություն աջակցություն են ցուցաբերել Լաչինի միջանցքի շուրջ ստեղծված իրավիճակի հետևանքով Գորիսում և ՀՀ այլ համայնքներում մնացած անձանց, այդ թվում երեխաներին:

«Սոցիալ-հոգեբանական աջակցություն հանրակացարանաբնակ երեխաներին և միայնակ ծերերին» ծրագիր

1. «Ժպիտների ակումբ» ծրագիրը գործում է Երևանում և Կոտայքի մարզում: Ծրագրի իրականացման համար Հայկական Կարմիր խաչի ընկերությանը հատուկ տրամադրվել է կահավորված սենյակ՝ Շիրակի 2Ա հասցեում գտնվող հանրակացարանում:

Ծրագրում ընդգրկված են 7-14 տարեկան հանրակացարանաբնակ երեխաներ, ովքեր մասնակցում են մասնավոր ամենօրյա դասերին հանրակացարաններում գտնվող հատուկ կահավորված սենյակներում:

Ծրագրի գլխավոր նպատակն է աջակցել երեխաների կրթական մակարդակի բարձրացմանը՝ իրականացնելով մշակութային, սպորտային և ինտելեկտուալ միջոցառումներ: Կամավորների կողմից ամեն օր իրականացվում են այցեր, որի ընթացքում նրանք անցկացնում են դասապատրաստումներ:



Գործում են առանձին խմբակներ (անգլերեն, նկարչություն, Էկոլոգիա, սպորտ, ընթերցանություն, ինֆորմատիվ ժամանց և այլն), որի ընթացքում կամավորները նրանց տալիս են ուլորտային գիտելիքներ:
Ամենօրյա դասապատրաստումներից բացի կամավորները ամիսը մեկ անգամ կազմակերպում են միջոցառումներ, որոնք ուղղված են երեխաների ընդհանուր զարգացմանը, այդ թվում կազմակերպում այց դեպի թատրոն, թանգարան կամ այլ մշակութային վայրեր: Կազմակերպվում են գեղեցիկ ցերեկույթներ Ամանորին, Սբ. Չատկին, հունիսի 1-ին և այլ տոն օրերին:
2022 թվականի հոկտեմբեր ամսից ծրագիրն իրականացվում է Ավստրիական Կարմիր խաչի աջակցությամբ:

2. Երևանի 2 հանրակացարաններում ապրող միայնակ տարեց փախստականներն իրենց մեկուսացված և միայնակ են զգում: Ծրագրի շրջանակներում կամավորները շաբաթը մեկ այցելում են շահառուներին, օգնում նրանց տնային գործերում և կազմակերպում սոցիալական/մշակութային միջոցառումներ: Թվով 90 տարեցների եռամսյակը մեկ տրամադրվում են հիգիենիկ պարագաների և սննդային փաթեթներ:

«Կրթության հասանելիության ապահովում սահմանամերձ համայնքների դպրոցների և դարաբաղյան հակամարտության հետևանքով տեղահանված երեխաների համար» ծրագիրը իրականացվում է Սյունիքում՝ Տեղ, Գորիս, Սյունիք, Գեղանուշ համայնքներում, Գեղարքունիքում՝ Վարդենիս և Մեծ Մասրիկ համայնքներում, Արարատում՝ Մասիս քաղաքում, Կոտայքում՝ Ջրագղանում, Վայոց Ձորում՝ Ջերմուկ համայնքում, Երևանում՝ ՀԿԽԸ Սոցիալ-հոգեբանական կենտրոնում: Ծրագիրը նպատակ ունի ապահովել կրթության հասանելիությունը սահմանամերձ համայնքների կրթական հաստատություններ հաճախող երեխաների, ինչպես նաև Հայաստանի համայնքներում ապաստանած ԼՂ-ից տեղահանված երեխաների համար (ակումբներ հաճախող երեխաների ընդհանուր թիվը՝ շուրջ 750): Ծրագրի միջոցներով վերանորոգվել, կահավորվել և անհրաժեշտ պարագաներով զինվել են 10 երեխայի զարգացման կենտրոնները՝ «Ժպիտների ակումբներ»/«Անվտանգ տարածքներ», որտեղ իրականացվում են

Դասապատրաստումներ
Սիրողական խմբակներ
Սոցիալական և մշակութային միջոցառումներ
«Մարդկային արժեքների խթանում» դասընթացը:

Ծրագիրն իրականացվում է ԿԽՄԿ հետ համագործակցության շրջանակներում:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՋ



Երիտասարդական Կարմիր Խաչը (ԵԿԽ) Հայկական Կարմիր Խաչի ընկերության շրջանակներում գործող կամավոր անդամների երիտասարդական միավորում է, որը հիմնադրվել է 1992թ. նոյեմբերի 3-ին: Այն գործում է ՀԿԽԸ բոլոր մարզային և տարածքային մասնաճյուղերում և գործունեություն է ծավալում հետևյալ ոլորտներում.



Սոցիալական աջակցություն

- իրականացնում է սոցիալ-հոգեբանական աջակցության ծրագրեր ուղղված հանրակացարանաբնակ միայնակ ծերերին, ծնողազուրկ, փախստական և անապահով ընտանիքների երեխաներին

Առողջապահություն

- կազմակերպում է բազմաբնույթ հանրային միջոցառումներ ու առողջ ապրելակերպի թեմաներով դասընթացներ ուսումնական հաստատություններում

Միջազգային համագործակցություն

- իրականացնում է երիտասարդ կամավորների փոխանակում Բրիտանական և Գերմանական Կարմիր խաչերի հետ «Եվրոպական կամավորական ծառայություն» ծրագրի շրջանակներում
- կազմակերպում և մասնակցում է միջազգային հավաքների, ճամբարների, սեմինարների, թրեյնինգների

Մարդասիրական արժեքների լուսարանում

- կազմակերպում է Կարմիր խաչի գաղափարների լուսարանում դպրոցներում և բուհերում
- նպաստում է կամավորական շարժման խթանմանը, կամավորների հավաքագրմանն ու ՀԿԻԸ գործունեության մեջ ներգրավմանը



2022թ. Յայկական Կարմիր խաչի ընկերության կամավորական բազան համալրվել է առցանց և անցանց գրանցված 1226 նոր կամավորներով: Առցանց գրանցվող կամավորների տվյալներն անմիջապես հայտնվում են Salesforce հարթակում, որը ՅԿԽԸ-ն օգտագործում է կամավորների բազայի ապահով պահպանման նպատակով:

Նոր գրանցված կամավորների համար շաբաթական 1-2 անգամ կազմակերպվում է լուսաբանման սեմինարներ, որի ընթացքում նրանց ներկայացվում են ԿԽԿՄ միջազգային շարժման պատմությունը, 7 սկզբունքները և ՅԿԽԸ գործունեությունը:

Տարվա ընթացքում կամավորները մասնակցել են կարողությունների զարգացման, ծրագրային և մասնագիտական տարբեր դասընթացների, ինչը խթանել է նրանց ակտիվ մասնակցությունը ՅԿԽԸ գործունեության բոլոր ուղղություններում:

Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժման, Յայկական Կարմիր խաչի գործունեության լուսաբանման համար ՅԿԽԸ-ն կամավորների ակտիվ ներգրավվածությամբ ստեղծել է «Դեպի մարդասիրություն» սեղանի խաղը՝ նախատեսված միջին և ավագ տարիքի դպրոցականների համար:



Երիտասարդական և կամավորական զարգացում. ԿԻՄՖ կարողությունների զարգացման հիմնադրամ

2022 թվականին **Երիտասարդական և կամավորական զարգացում** ծրագրի շնորհիվ գրանցել ենք հետևյալ արդյունքները.

1. Ներդրվել է կամավորական կառավարման նոր մեխանիզմ: Դասընթացների և վերապատրաստումների միջոցով զարգացել են ՀԿԻՅ մարզային մասնաճյուղերի կամավորների պատասխանատուների և աշխատակազմի կարողությունները:

2. Կամավորների ապահովությունը, անվտանգությունը, բարեկեցությունը և պաշտպանությունն առաջնահերթություն են ՀԿԻՅ-ի համար: Կամավորներն Էական ծառայություններ են մատուցում ամենաբարձր շրջաններում, ուստի մշակվել են մեխանիզմներ՝ բարելավելու կամավորների ապահովությունը, կանխելու դժբախտ պատահարները և տրամվանները, խթանելու մտավոր բարեկեցությունը երիտասարդների և կամավորների շրջանում: Ավելի քան 800 կամավոր մասնակցել է «Կամավորներ, ապահով եղեք» թեմայով վերապատրաստմանը:



3. ՀԿԽԸ-ն հիմնադրել է երիտասարդ առաջնորդների ակադեմիան՝ մշակելով բոլոր ընթացակարգերը և մոդուլները: Քսան երիտասարդ մասնակցել է ՀԿԽԸ երիտասարդ Առաջնորդների ակադեմիայի կարողությունների զարգացման ճամբարին, որը տեղի է ունեցել 2022թ., հուլիսի 17-22, Կոտայքում՝ Աղվերանում: Վերապատրաստման 6 օրերի ընթացքում մասնակիցները զարգացրել և ուսումնասիրել են իրենց առաջնորդական հմտությունները, ոճը և սովորել են՝ ինչպես մշակել իրենց նախագծերը և բյուջեն, վերլուծել խնդիրները, ներկայացնել նախագիծը: Ընտրող կոմիտեն ընտրել է 14 նախաձեռնություն, որոնք ստացել են մինչև 500 000 ՀՀ դրամ դրամաշնորհ: Օրինակ Թռչկանի ջրվեժի մաքրումը, Գառնահովիտում մանկական խաղահրապարակի բարելավումը, կոմպոստացումը Բջնիում, կանգառի կառուցումը Արևիկում և այլն:

Ավելի քան 800 կամավոր մասնակցել է «Կամավորներ՝ր, ապահով եղեք» թեմայով վերապատրաստմանը:

Քսան երիտասարդ մասնակցել է ՀԿԽԸ երիտասարդ Առաջնորդների ակադեմիայի կարողությունների զարգացման ճամբարին:



ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՏԱՐԱԾՈՒՄ



Մենք շարունակաբար աշխատանք ենք տանում մարդասիրական արժեքների տարածման, Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժման, Հիմնարար սկզբունքների, Միջազգային մարդասիրական իրավունքի, խորհրդանշանի գործածության և չարաշահման, մեր գործունեության ու առաքելության վերաբերյալ իրազեկության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ:



2022 թվականին՝ ԿԻ և ԿՄ Շարժման և ՀԿԻԸ գործունեության վերաբերյալ լուսաբանումը երեխաների և երիտասարդների շրջանում նորարարական մեթոդներով կազմակերպելու նպատակով, ԿԻՄԿ հետ համագործակցության շրջանակներում ստեղծվել է Լուսաբանման դասի ձայնագրված տարբերակ, ինչպես նաև «ՀՈԼ» ՍՊԸ-ի հետ միասին ստեղծվել է թեմատիկ սեղանի խաղ՝ «Մարդասիրության ուղին»:
 2022 թվականին թարմացվել է ՀԿԻԸ Բրենդի ուղեցույցը:

Թվային արձավներ

Մայիսի 8

Մայիսի 8-ին՝ Կարմիր խաչի և Կարմիր մահիկի համաշխարհային օրվա կապակցությամբ, ՀԿԻԸ-ն միացել է ԿԻ/ԿՄ Շարժման **«Հավատա բարության ուժին»** գլոբալ թվային արձավին՝ համապատասխան թեմատիկ հրապարակումներով սոցիալական էջերում:

Հանրային միջոցառումներ

«Գլոբալ քայլ»

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը (ՀԿԻԸ)՝ որպես Դիաբետի համաշխարհային ֆոնդի «Գլոբալ քայլ» (Global Diabetes Walk)-ի 2022 թվականի դեսպան, նոյեմբերի 16-ին Գեղարքունիքում, Արարատում և Արագածոտնում իրականացրեց նույն խորագրով իրազեկման արձավը, որին մասնակցեցին բժիշկներ, ուսուցիչներ, ուսանողներ, ինչպես նաև ՀԿԻԸ կամավորները և Դիաբետի ինքնօգնության խմբերը:



Նպատակն էր իրագրելվածության բարձրացման և առողջ ապրելակերպի խթանման միջոցով կանխարգելել շաքարային դիաբետը և շաքարային դիաբետի բարդությունները՝ շաքարային կամ նախաշաքարային դիաբետ ունեցող տարեցների մոտ:

«Արյուն հանձնելը համերաշխության քայլ է»

Հունիսի 14-ին՝ Արյան դոնորի համաշխարհային օրը, Առողջապահության նախարարությունը, ՀՀ ԱՆ «Պրոֆեսոր Ռ.Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ն և Հայկական Կարմիր խաչի ընկերությունը՝ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի աջակցությամբ կազմակերպել էին արշավ՝ «Արյուն հանձնելը համերաշխության քայլ է» խորագրով:

Արշավի նպատակն էր խրախուսել արյան կամավոր դոնորությունը՝ հանրապետության արյան բանկը համալրելու նպատակով:

Հայկական Կարմիր խաչի կամավորներն ուղղորդում և աջակցում էին արյուն հանձնողներին գործընթացի ամբողջ ընթացքում, իսկ օրվան նախորդող ամբողջ շաբաթը իրագրելված թերթիկներ էին բաժանել հանրային վայրերում՝ հորդորելով կամավոր արյան դոնոր դառնալ:

«Առաջին օգնության համաշխարհային օր»

Առաջին օգնության համաշխարհային օրվա կապակցությամբ ՀԿԽԸ Շիրակի, Սյունիքի, Արարատի, Լոռու մարզային մասնաճյուղերի կամավորները մարզերի տարբեր քաղաքներում և համայնքներում իրականացրել են իրագրելված արշավներ, ցուցադրել առաջին օգնության քայլերը, արյունահոսություն, վիրակապում, սիրտ-թոքային վերակենդանացում, շնչուղիների խցանում և այլ իրավիճակներ: Ակցիայի շրջանակներում կամավորներն անցորդներին բաժանել են դիմակներ, ձեռնոցներ, ձեռքերի ախտահանիչ միջոցներ և թռուցիկներ:



Համագործակցություն 2LU-ների հետ

2022 թվականի դեկտեմբերին կազմակերպվեց աշխատանքային ճաշ առաջատար 2LU-ների 15 ներկայացուցիչների հետ՝ ամփոփելու 2022 թվականի ՀԿԽԸ գործունեությունը և շնորհակալություն հայտնելու տարվա ընթացքում ակտիվ լուսաբանման համար:

Տարվա ընթացքում տարածել ենք 17 մամուլի հաղորդագրություն

Տպագիր նյութեր, ցուցանակներ

Տպագրվել է 2021 թվականի Տարեկան զեկույցը, կիսամյակային տեղեկագրերը, 2023 թվականի օրացույցը, ինչպես նաև ՀԿԽԸ տարբեր ուղղություններով իրազեկող տպագիր նյութեր, այդ թվում՝ Պայթուցիկ զինամթերքի վտանգի իրազեկման, Առաջին օգնության հմտությունների, Առաջին հոգեբանական օգնության, Առողջ ապրելակերպի և այլ թեմաներով:

Տարվա ընթացքում երևանում և մարզերում տեղադրվել է Նվիրատվությունների և Պատվաստումների խթանման վերաբերյալ 12 բիլբորդ:

ՀԿԽԸ տեսանելիությունը մեծացնելու նպատակով երևանում և մարզերում տեղադրվել են դեպի գրասենյակներ ուղղորդող ցուցանակներ:

Տեսանյութեր

Տարվա ընթացքում պատրաստել ենք Հայկական Կարմիր խաչի գործունեությունը լուսաբանող 1 ֆիլմ, Երիտասարդական ակադեմիայի մասին 6 հոլովակ, Առաջին օգնության 2 հոլովակ, սեպտեմբերի 13-ի ռազմական գործողությունների արձագանքի մասին 1 հոլովակ, թվայնացրել ենք լուսաբանման դասընթացը:

Լուսաբանմանն ուղղված գործունեությունն իրականացվում է ԿԽՄԿ համագործակցության շրջանակներում:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄ



Հայկական Կարմիր խաչի ընկերության առաջնահերթ զարգացման ուղղությունն է մարզային և համայնքային մասնաճյուղերի կարողությունների, այդ թվում՝ ռեսուրսների մոբիլիզացման ամրապնդումն ու հզորացումը՝ համայնքների կարիքների վրա հիմնված երկարաժամկետ ծառայություններ մատուցելու և արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելուն պատրաստ լինելու համար:



Կազմակերպության զարգացման ուղղությամբ՝ Հայկական Կարմիր խաչի ընկերության առաջնահերթություններն են.

- Մարզային մասնաճյուղերի ցանցի հզորացումն ու ամրապնդումը,
- Ազգային ընկերության կառավարման և գործունեության համակարգերի անխափան գործարկումը, ինչպիսին են հետադարձ կապի ապահովումը, և այլն
- Մարդկային ռեսուրսների կառավարումը և կարողությունների շարունակական զարգացման ապահովումը:

Մասնաճյուղերի զարգացում

Տավուշի, Գեղարքունիքի, Սյունիքի, Արարատի և Վայոց Ձորի մարզային մասնաճյուղերի կարողությունների զարգացում

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի հետ համագործակցությամբ՝ Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի, Արարատի և Սյունիքի մարզային մասնաճյուղերում, շարունակվել է կարողությունների զարգացման համալիր ծրագիրը, որի շրջանակներում իրականացվել են հաղորդակցության, հաշվետվողականության, կամավորների կառավարման և ռեսուրսների մոբիլիզացման կարողությունների զարգացում: Ուշադրության կենտրոնում են պահվել Մարզային մասնաճյուղերի և համայնքային ներկայացուցչությունների կողմից մատուցվող ծառայությունների բարելավումը: Ընդհանուր առմամբ ՀՀ 5 մարզերի 18 համայնքներում իրականացվել են 50-ից ավելի ծրագրեր՝ երեխաների, միայնակ տարեցների և հաշմանդամների, սահմանափակ հնարավորություններով կանանց և այլ խոցելի խմբերի համար: Կազմակերպվել են ամառային ճամբարներ և այլ մշակութային և կրթական միջոցառումներ երեխաների համար՝ դիմակայունության բարձրացման նպատակով:



Արարատի, Արագածոտնի, Կոտայքի, Գեղարքունիքի, Արմավիրի, Սյունիքի և Տավուշի մարզային մասնաճյուղերի կարողությունների զարգացում՝ սննդի աջակցման ծրագրի միջոցով

Շվեյցարական Կարմիր խաչի կողմից ֆինանսավորված մարզային մասնաճյուղերի զարգացման ծրագիրը նպատակ ունի գործնականում ձեռք բերված կարողությունների կիրառման մոտեցումով բարելավել մասնաճյուղերի կարիքների գնահատման, խնդիրներին արձագանքման և ծրագրերի կառավարման կարողությունները: Ծրագրի շրջանակներում շարունակվել է Արարատի մարզի Մասիս քաղաքում բարեգործական ճաշարանի գործարկումը՝ շաբաթական 3 անգամ տաք ճաշ տրամադրելով 70-110 միայնակ տարեցների: Մյուս մարզերում ամեն ամիս սննդի փաթեթներ են տրամադրվել ընդհանուր 620 խոցելի տարեցների և ամեն եռամսյակ տրամադրվել են հիգիենիկ փաթեթներ: Ծրագրի շահառուների համար կամավորները կազմակերպել են սոցիալականացման միջոցառումներ, իսկ ծննդյան օրերին շնորհավորել և հանձնել են նվերներ: Ծրագիրը նաև անձնակազմի և կամավորների կարողությունների զարգացման բաղադրիչ ունեւր, ինչի շրջանակներում ներգրավված անձնակազմն ու կամավորները մասնակցել են ծրագրերի տարեցների խնամքի առանձնահատկությունների վերաբերյալ պարտադիր դասընթացների:

Ինստիտուցիոնալ զարգացում

2022թ. ՅԿԽԸ-ն՝ Միջազգային ԿԽ/ԿՄ շարժման իր գործընկերների հետ համագործակցությամբ, շարունակել է կազմակերպության զարգացման լայնամասշտաբ ծրագիրը՝ համաձայն ԱԸ զարգացման 2021-2023թթ. եռամյա պլանի: Բոլոր մարզային մասնաճյուղերում իրականացվել են նյութական և մարդկային կարողությունների հզորացման միջոցառումներ՝ ապահովելով գործունեության համար անհրաժեշտ կարողությունները, գործիքակազմն ու պայմանները:

Տարվա ընթացքում պարբերաբար կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ շուրջ 500 կամավորների համար՝ Առաջին օգնության, Արտակարգ իրավիճակներին արձագանքման, ընտանեկան կապերի վերականգնման, Երեխաների և տարեցների հետ աշխատանքի առանձնահատկությունների վերաբերյալ:

իրականացվել է 405 կամավորների ապահովագրումը դժբախտ պատահարներից:

Յունիսի 6-ին հջանում և նոյեմբերի 15-ին երևանում ՅԿԽԸ ղեկավարության և բոլոր Մարզային մասնաճյուղերի ղեկավար կազմի մասնակցությամբ կազմակերպվեցին համաժողովներ: Համաժողովների ընթացքում ամփոփվեցին անցնող տարվա գործունեությունը, նվաճումներն ու մարտահրավերները: Համաժողովներին հաջորդեցին աշխատակիցների և կամավորների համար դասընթացներ և աշխատարաններ: Տարեվերջին, կամավորների միջազգային օրվան նվիրված միջոցառումներ կազմակերպվեցին բոլոր մարզերում. ամփոփվեց կամավորական տարին և ակտիվ կամավորները խրախուսվեցին:

Կրթական ուղղությամբ ՅԿԽԸ կողմից կատարվող աշխատանքներում ներգրավված են ավելի քան 1500 կամավորներ և փորձագետներ

Ոչ ֆորմալ մարդասիրական կրթություն

Յայկական Կարմիր խաչի ընկերությունը (ՅԿԽԸ) կրթության ոլորտում իր մարդասիրական գործունեությունն է ծավալում 1990-ական թվականներից ի վեր՝ իրականացնելով մարդասիրական կրթական և ուսուցողական ծրագրեր երիտասարդների և մեծահասակների շրջանում:

ՅԿԽԸ կողմից իրականացվող կրթական ծրագրերի հիմնական նպատակն է խթանել փոխըմբռնումը, կարեկցանքը և մարդկային արժանապատվության նկատմամբ հարգանքը, ինչպես նաև անհատներին զինել անհրաժեշտ գիտելիքներով, հմտություններով և ճիշտ աշխարհայացքով՝ նպաստելու և պաշտպանելու մարդու իրավունքները, սոցիալական արդարությունն ու կայուն զարգացումը:

Կարևորելով արտակարգ իրավիճակներում անվտանգ, որակյալ և ներառական կրթության հասանելիության և ուսումնական գործընթացի շարունակականության ապահովման խնդիրները, ՅԿԽԸ կողմից նաև մշակվել և ներդրվել է **Կրթությունը արտակարգ իրավիճակներում (ԿԱԻ)** համակարգող մի շարք համալիր միջոցառումների փաթեթ, որն ուղղված է զինված հակամարտություններից, բնական աղետներից, համաճարակներից կամ այլ ճգնաժամերից տուժած, ինչպես նաև կրթական գործընթացից տարբեր պատճառներով դուրս մղված երեխաներին և երիտասարդներին աջակցման տրամադրմանը: Միջոցառումների ցանկում ներառված են ժամանակավոր ուսումնական տարածքների ստեղծումը, ճգնաժամային պատրաստվածության բարձրացումը, ուսուցիչների և կրթական անձնակազմի վերապատրաստումը, սովորողներին և մանկավարժներին սոցիալ-հոգեբանական օգնության ծառայությունների մատուցումը:

Ներկայումս, ՅԿԽԸ կողմից իրականացվող գործունեության շրջանակներում ավելի քան մեկ տասնյակ ոչ ֆորմալ կրթական ծրագրեր/կրթական բաղադրիչով ծրագրեր են իրագործվում տարբեր ուղղություններով: Կրթական ուղղությամբ ՅԿԽԸ կողմից կատարվող աշխատանքներում ներգրավված են ավելի քան 1500 կամավորներ և փորձագետներ, որոնք հատուկ վերապատրաստման դասընթացներ են անցել մանկավարժության, երեխաների և երիտասարդների իրավունքների, ներառության և պաշտպանության հարցերին առնչվող թեմաներով:



Համատեղ ծրագրերի իրականացման շրջանակներում սերտ գործընկերություն է հաստատվել ԿԻՄԿ-ի, ԿԻՄՖ-ի, գործընկեր ազգային ընկերությունների, ինչպես նաև այլ շահագրգիռ կողմերի հետ, որոնց համախմբված ջանքերը ուղղված են արտակարգ իրավիճակներից տուժած, ինչպես նաև տարբեր պատճառներով ռիսկային խմբում հայտնված երեխաներին և երիտասարդներին աջակցման ապահովմանը:

2021թ. **Շարժում կրթության համար** (այսուհետ՝ Շարժում) մոտեցումը մշակվել էր Նորվեգիայի Կարմիր Խաչի (NorCross) համագործակցությամբ, որի գաղափարն էր միատեղել Շարժման անդամների ուժերն ուղղված կրթության ոլորտում մարդասիրական կարիքներին արձագանքման արդյունավետության բարձրացմանն ու ընդլայնմանը: ՀԿԻՇ կողմից սկսվել է «Հայաստանում M4E մոտեցման փորձարկում և զինված հակամարտություններից տուժած երեխաների կրթության հասանելիության բարձրացում» ծրագրի իրագործումը, որի հիմքում ընկած էր երկրում առկա կրթական (մարդասիրական) կարիքների կայուն օպտիմիզացման գործընթացի առանցքը:

Ծրագրի շրջանակներում 2022թ. ընթացքում իրականացված գործողությունները ուղղված էին ՀԿԻՇ-ի կարողությունների ամրապնդմանն ու բարելավմանը կրթության հետ կապված հումանիտար կարիքների և մարտահրավերների արդյունավետ լուծման նպատակադրմամբ:

ՅԿԻՇ համապատասխան աշխատակիցների և կամավորների համար կազմակերպվել են համաժողովներ և վերապատրաստման դասընթացներ միջազգային փորձագետների ներգրավմամբ՝ բարելավելու իրենց գիտելիքներն ու հմտությունները կրթությունը արտակարգ իրավիճակներում (Education in Emergency), համայնքի ներգրավվածության և հաշվետվողականության (Community Engagement and Accountability), մարդասիրական կրթության կառավարման մեխանիզմների վերաբերյալ: Մշակվել և կիրառվել են արտակարգ իրավիճակների երեք սցենարների համար ստանդարտ գործողությունների ընթացակարգեր (ՍԳԸ): Ընդհանուր առմամբ, 260 կամավորներ մասնակցել են տարբեր վերապատրաստման սեմինարներին, դասընթացավարների վերապատրաստման և աշխատաժողովներին:

2022թ. Յայաստանում մարդասիրական կրթության ոլորտի ուսումնասիրություն/կարիքների գնահատում էր նախաձեռնվել ՅԿԻՇ-ի կրթական ծրագրերի և ծառայությունների բարելավման ոլորտները բացահայտելու, ինչպես նաև Յայաստանում մարդասիրական կրթության ներկա վիճակը գնահատելու նպատակով: Այս ուսումնասիրության արդյունքներն ու բացահայտումները օգնեցին ՅԿԻՇ-ին բացահայտելու Յայաստանում մարդասիրական կրթության կարիքները, բացերը և հեռանկարները, ինչպես նաև օգտագործել դրանք ՅԿԻՇ կողմից իրականացվող կրթական ծրագրերի ու ծառայությունների զարգացման և ամրապնդմանն ուղղված հետագա գործողությունների մշակման համար:

2020-22թթ. ընթացքում ԼԴ-ում տեղի ունեցած սրացումներն ու հետեսկալացիոն իրավիճակը հսկայական հումանիտար հետևանքներն ունեցավ նաև երեխաների կրթական գործընթացի համար: ԼԴ-ից Յայաստան տեղահանված երեխաները, ինչպես նաև ՀՀ սահմանամերձ համայնքներում ապրող երեխաները ամիսներով զրկվել են կրթական գործընթացից այս սրացումների պատճառով: Ավելին, հրադադարի ռեժիմի էսկալացիայից հետո կրկնվող խախտումները և ներկայիս անորոշ իրավիճակը շարունակում են վտանգել տուժած երեխաների կրթության հասանելիությունը (A2E) և բացասաբար են անդրադառնում նրանց սոցիալ-հոգեբանական իրավիճակի վրա: Այս բացասական հետևանքները մեղմելու նպատակով իրականացվել են տարբեր ուսումնական և սոցիալ-հոգեբանական ծրագրեր ազդակիր երեխաների խմբերի համար:

Արդյունքում, արտակարգ իրավիճակներում կրթության հասանելիությունը ապահովող համապատասխան մոտեցումների և գործիքների ներառմամբ անհրաժեշտ գործողություններ են իրագործվել՝ հնարավորություն ընձեռելով ԼԴ-ից տեղահանված, ինչպես նաև սահմանամերձ վայրերից և տեղայններից խոցելի հանդիսացող 480 երեխաների համար կազմակերպել ապահով վայրեր/«Ժպիտների ակումբներ» 10 համայնքներում: Այս տարածքներում ԼԴ-ից տեղահանված և սահմանամերձ համայնքներից երեխաներն անցել են սոցիալ-հոգեբանական և արտադասարանական ուսուցման միջոցառումներ, որոնք կազմակերպվել են ՅԿԻՇ-ի կամավորների կողմից: Հիմնվելով այս ծրագրի մոնիտորինգի և գնահատման արդյունքների վրա, ինչպես նաև հետևելով շահառու ուսուցիչների, ծնողների և աշակերտների դրական արձագանքներին և խնդրանքներին, ապահով վայրերի գործունեությունը կպահպանվի 2023թ. ընթացքում, ինչը թույլ կտա ապահովել երկարաժամկետ դրական ազդեցության արդյունքներն ուսումնական բացերը լրացնելու, մարդասիրական արժեքների խթանելու և արտակարգ իրավիճակների նկատմամբ երեխաների դիմադրողականության ամրապնդելու ուղղությամբ:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ



**Հայկական Կարմիր խաչի ընկերությունն
իր գործունեության ընթացքում
մշտապես համագործակցում է Կարմիր
խաչի և Կարմիր մահիկի (ԿԽ և ԿՄ)
միջազգային շարժման բոլոր
բաղկացուցիչների, Կառավարության,
միջազգային և տեղական՝ մասնավոր ու
հասարակական
կազմակերպությունների հետ:**



Հայկական Կարմիր խաչի ընկերությունը Պատվոգիր ստացավ ՀՀ Առողջապահության նախարարության կողմից

Հունվարի 21-ին ՀՀ Առողջապահության առաջին տեղակալ Լենա Նանուշյանը Հայկական Կարմիր խաչի ընկերության գրասենյակում Պատվոգիր հանձնեց ՀԿԽԸ գործադիր տնօրեն Աննա Եղիազարյանին՝ Հայաստանի Հանրապետության մարգերում և Երևանում Քովիդ - 19 վարակի դեմ պատվաստումների իրականացմանն աջակցություն ցուցաբերելու, կամավորների կողմից հանրության իրազեկման աշխատանքների համար:

- Շատ կարևոր էր Հայկական Կարմիր խաչի ընկերության աջակցությունը՝ պատվաստումների գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձրացման գործում: Մենք զգացինք, որ մենակ չենք, և ՀԿԽԸ-ն կանգնած է պետության կողքին: Պետք է նշեմ հատկապես կամավորների նվիրվածությունը: Տպավորված ենք, թե ինչ մեծ արագությամբ նրանք կազմակերպված ձևով Օպերայի հրապարակը վերածեցին պատվաստման կետի և, թե որքան սրտացավ էին վերաբերվում պատվաստվողներին: Շատ շնորհակալ ենք համագործակցության համար, քանի որ, եթե մենք այսօր ասում ենք, որ բնակչության մեծամասնությունը ստացել է պատվաստման առաջին դեղաչափը, այստեղ դուք ունեցել եք ձեր ներդրումը, - հանձնելով պատվոգիրը նշեց ԱՆ առաջին տեղակալը:



ՀԿԽԸ գործադիր տնօրեն Աննա Եղիազարյանն ԱՆ առաջին տեղակալին Ներկայացրեց ՀԿԽԸ գործունեության ռազմավարական ուղղությունները և դրանց փոխկապակցվածությունը՝ աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպման տեսանկյունից, մասնավորապես՝ սոցիալ-առողջապահական ուղղությամբ իրականացվող ծրագրերը, ՀԿԽԸ արձագանքը Քովիդ-19 համավարակի և Ղարաբաղյան հակամարտության սրացման հետևանքներին:

- Ճնորհակալ եմ արդյունավետ համագործակցության համար: ՀԿԽԸ-ն՝ որպես աջակցող կառույց կառավարությանը մարդասիրական ոլորտում մշտապես կանգնած է ձեր կողքին՝ մոբիլիզացնելով մարդկային և ֆինանսական ռեսուրսներ և աջակցելով այն ուղղություններում, որտեղ մեր կարիքը կա, - ասաց ՀԿԽԸ գործադիր տնօրեն Աննա Եղիազարյանը: - Այս Պատվոգիրը շատ պարտավորեցնող է և ոգևորող՝ հատկապես մեր կամավորների համար:

Քննարկվեցին նաև հետագա համագործակցության հարցեր՝ պատվաստումների վերաբերյալ առավել թիրախային իրազեկման, Գյումրու շուրջօրյա խնամքի կենտրոնում պալիատիվ խնամքի կազմակերպման, հոգեբանական ծառայության կարևորության և այլ թեմաներով: ՀԿԽԸ գործադիր տնօրեն Աննա Եղիազարյանը ԱՆ առաջին տեղակալ տիկին Նանուշյանին նվիրեց «Հարյուր տարվա մարդասիրություն» գիրքը՝ նվիրված ՀԿԽԸ գործունեության 100-ամյակին:



ՀԿԽԸ պատվիրակությունը մասնակցեց 23-րդ Գլխավոր համագումարին

Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) պատվիրակությունը՝ գործադիր տնօրեն Աննա Եղիազարյանի գլխավորությամբ, հունիսի 19-ից 23-ը գտնվում էր Շվեյցարիայում՝ Ժնևում, որտեղ մասնակցում էր Կարմիր խաչի և Կարմիր մահիկի 23-րդ Գլխավոր համագումարին:

Համագումարի ժամանակ քննարկվեցին աշխարհի առջև ծառայած մարտահրավերները, խնդիրները և ճարժման համապարփակ պլաններն ու արձագանքն այդ մարտահրավերներին:

ՀԿԽԸ պատվիրակությունը մի շարք հանդիպումներ ունեցավ նաև գործընկեր Ազգային ընկերությունների ղեկավարների հետ, քննարկվեցին ներկա համագործակցության շրջանակները և ապագա ծրագրերը:

Համագումարի ժամանակ ստորագրվեց Համագործակցության հուշագիր Իրանի Կարմիր մահիկի հետ, որը ստորագրեց ԻԿՄ Նախագահ պարոն Փիր Հուսեյն Բորիվանդը:

Ըստ հուշագրի՝ Ազգային ընկերությունները կհամագործակցեն աղետների կառավարման և արագ արձագանքի, առողջապահության, կազմակերպության զարգացման և կամավորության խթանման ոլորտներում:



Վարչապետ Նիկոլ Փաշինյանն այցելեց ՅԿԻՇ Գյուլմրու շուրջօրյա խնամքի կենտրոն

Ապրիլի 16-ին ՅԿ Կարչապետ Նիկոլ Փաշինյանն այցելեց Գյուլմրու շուրջօրյա խնամքի կենտրոն՝ ծանոթանալու հիմնանորոգումից հետո խնամառուների զգալիորեն բարելավված պայմաններին:

ՅԿ Կարչապետին դիմավորեցին և իրականացված աշխատանքներին ծանոթացրեցին ՅԿԻՇ Նախագահ Մխիթար Մնացականյանը և գործադիր տնօրեն Աննա Եղիազարյանը:

Կենտրոնի հիմնանորոգման և խնամքի որակի բարձրացման նպատակով 2020 թվականից մինչ օրս ներդրվել է մոտ 287 միլիոն ՅԿ դրամ:

Հիմնանորոգումն իրականացվել է Ավստրիական զարգացման գործակալության, Ավստրիական, Իտալական և Շվեյցարական Կարմիր խաչերի ֆինանսական աջակցությամբ:

ՅԿԻՇ-ն Հայաստանի Արագ արձագանքման թիմի անդամ է

Յուլտեմբերի 5-ին Երևանում՝ Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում տեղի ունեցավ Արագ արձագանքման բժշկական թիմերի 5-րդ գլոբալ հանդիպումը, որին մասնակցում էր նաև Հայկական Կարմիր խաչի ընկերության թիմը՝ ԿԻԿՖ և Կրացական Կարմիր խաչի մեր գործընկերների հետ միասին:



ՀԿԽԸ Պատվոգիր ստացավ ՀՀ Արտակարգ իրավիճակների Նախարարության կողմից

Հոկտեմբերի 12-ին Հայկական Կարմիր խաչի ընկերությունը (ՀԿԽԸ) Պատվոգիր ստացավ ՀՀ Արտակարգ իրավիճակների Նախարարության կողմից՝ օգոստոսի 14-ին Սուրմալու տոնավաճառում տեղի ունեցած հրդեհի մարման աշխատանքներին մասնակցելու և ցուցաբերած օգնության համար: Պատվոգիրը ՀԿԽԸ գործադիր տնօրեն Աննա Եղիազարյանին հանձնեց ԱԻ փոխնախարար Ա. Գրիգորյանը:

Ազգային ընկերությունների ղեկավարների հանդիպումը Մոսկվայում

Նոյեմբերի 2-3-ը ՀԿԽԸ պատվիրակությունը՝ գործադիր տնօրեն Աննա Եղիազարյանի գլխավորությամբ, Մոսկվայում՝ Ռուսաստանում, մասնակցեց Եվրոպայի, Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի պետությունների Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ազգային ընկերությունների ղեկավարների և ԿԽՄԿ և ԿԽՄՖ ներկայացուցիչների հանդիպմանը:

Միջոցառումը կազմակերպել էր Ռուսաստանի Կարմիր խաչը (ՌԿԽ), որը հանդիսանում է Ռուսաստանի ամենահին մարդասիրական կազմակերպությունը: Հանդիպմանը մասնակցում էին Կարմիր խաչի և Կարմիր մահիկի 12 ազգային ընկերությունների ղեկավարները՝ Ռուսաստան, Ադրբեջան, Հայաստան, Բելառուս, Բուլղարիա, Բոսնիա և Հերցեգովինա, Ղազախստան, Ղրղզստան, Սերբիա, Տաջիկստան, Թուրքմենստան և Ուզբեկստան:



Երկու օր ղեկավարները քննարկեցին առողջապահական, արտակարգ իրավիճակներին արձագանքման և ժամանակակից մարտահրավերներին վերաբերող հարցեր և փոխանակվեցին իրենց փորձով:

Չանդիպման հիմնական նպատակն էր քննարկել ազգային ընկերությունների միջև հումանիտար համագործակցության հետագա զարգացումն ու ամրապնդումը: Մասնավորապես, Ազգային ընկերությունների բոլոր ղեկավարները կիսվեցին հումանիտար մարտահրավերներին և ճգնաժամերին արձագանքելու իրենց հաջողված դեպքերով, ինչպես նաև խոսեցին թվային տեխնոլոգիաների կիրառման լավագույն փորձի մասին: Չանդիպման կարևոր թեմաներից էր Միջազգային շարժման գործունեությունը առողջապահական հարցերում:

Միջոցառմանը ներկա էին նաև Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի և Կարմիր խաչի միջազգային կոմիտեի ներկայացուցիչներ:

Ռուսական Կարմիր խաչի առաջարկով Ազգային ընկերությունները միացան Մոսկովյան բանաձևին, որն ուղղված է մարդասիրական օգնության ցուցաբերման, սոցիալ-հոգեբանական աջակցության, արտակարգ իրավիճակներին և Շարժման այլ առաջնահերթ ուղղություններում արձագանքի ոլորտներում համագործակցության զարգացմանը և կատարելագործմանը:

ՀԿԽԸ, ԿԽՄՖ այց Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոն

Դեկտեմբերի 12-ին Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոն էին այցելել Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) և Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի (ԿԽԿՄՖ) ներկայացուցիչները՝ ծանոթանալու Կենտրոնի ուսումնական և նյութական բազային, ինչպես նաև նրա հիմնական գործունեությանը:

ՀԿԽԸ գործադիր տնօրեն Աննա Եղիազարյանը և Կենտրոնի տնօրեն Յուրի Պոլեշչուկը բարձր գնահատեցին Կենտրոնի հետ սերտ համագործակցությունը, որի շրջանակներում վերապատրաստվում են ՀԿԽԸ Արագ արձագանքման և առաջին օգնության թիմերը, իրականացվում են համատեղ միջոցառումներ և մարդասիրական ծրագրեր: Կենտրոնի տնօրենը շեշտեց, որ ՀԿԽԸ պրոֆեսիոնալ անձնակազմի և կամավորների ներգրավվածությունը բարձր որակ է հաղորդում համագործակցությանը:

ԿԽԿՄՖ տարածաշրջանի ղեկավար Դավրոն Մուհամադիևը ներկայացրեց արտակարգ իրավիճակների ժամանակ ԿԽԿՄՖ ֆինանսավորման գործիքները, մասնավորապես DREF՝ Արտակարգ իրավիճակների արձագանքման ֆոնդը: Նշվեց նաև ՀԿԽԸ միջազգային փորձը Հոգեկան առողջության և առաջին օգնության ոլորտներում, մասնավորապես, որ տարածաշրջանում միայն Հայկական Կարմիր խաչի ընկերությունն է անցել ԱՕ դասընթացների միջազգային որակը հավաստող ատեստացիա: Մեծապես կարևորվեց, որ հոգեբանական աջակցությունը տրամադրվում է ոչ միայն շահառուներին և տուժածներին, այլև արձագանքներում ներգրավված անձնակազմին և կամավորներին:

Անդրադարձ կատարվեց նաև Կենտրոնի լոջիստիկ կարողություններին և քննարկվեց դրա հնարավորությունները համատեղ օգտագործելու հնարավորությունները:

ՀԿԽԸ-ն մի շարք միջազգային ցանցերի և աշխատանքային խմբերի անդամ է, ինչպիսիք են՝ Փախստականների, ապաստան հայցողների և միգրանտների հարցերով Եվրոպական Կարմիր խաչի ընկերությունների համագործակցության հարթակը, Եվրոպական Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների սոցիալ-հոգեբանական աջակցության ցանցը, Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի երիտասարդական հանձնաժողովը, հատուկ կարիքներով Փախստականների կարիքների գնահատման ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի աշխատանքային խումբը, Առաջին օգնության Եվրոպական խորհրդատվական կենտրոնը, Կարմիր խաչի և Կարմիր մահիկի Եվրոպական համակարգման կոմիտեն, ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ ուղղված միջոցառումները համակարգող հանձնաժողովը (ՄՀՀ), Եվրոպական Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և Տուբերկուլյոզի ցանցը, Կամավորության զարգացման Եվրոպական ցանցը, Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովը, ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին կից հասարակական խորհուրդը, Տարեցների սոցիալական պաշտպանության և խնամքի տրամադրման հիմնախնդիրներով զբաղվող կառույցների ցանցը, ՄԱԿ-ի Աղետների կառավարման երկրի թիմը, Գերիների, պատանդների և անհայտ կորած (գտնվելու վայրն անհայտ) անձանց հարցերով զբաղվող միջգերատեսչական հանձնաժողովը և այլն:

ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄՈՔԻԼԻԳԱՑՈՒՄ



2022 թվականին Հայկական Կարմիր խաչի ընկերությունը շարունակել է Ռեսուրսների հայթայթման գործընթացը՝ մինևույն ժամանակ աշխատելով այս ուղղությամբ կազմակերպության կարողությունների զարգացման վրա:

2022 թվականին Ռեսուրսների մոբիլիզացման ուղղությամբ գրանցվել են հետևյալ արդյունքները.

Կորպորատիվ հատվածի հետ տեղի են ունեցել հանդիպումներ 2 մարզերում՝ Կոտայքում և Տավուշում: Քննարկմանը մասնակցել են 15 տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ: Նրանց ներկայացվել է համագործակցության բազմաթիվ հնարավորություններ և տեղեկատվություն է տրամադրվել ֆինանսավորում պահանջող ծրագրերի և նախագծերի մասին:

Ստեղծել ենք դրամահավաքի նոր արտադրանք՝ սեղանի պրոմո ստենդներ՝ պատրաստված ակրիլից, ներսում տպված թռուցիկով՝ «Տանք հույս, սեր, ջերմություն», կատարենք նվիրատվություն, աջակցենք ՀԿԽԸ մարդասիրական առաքելությանը ուղերձով և QR կոդով, որն ուղորդում է դեպի ՀԿԽԸ կայքի նվիրատվության էջ: Բանկերում, սրճարաններում արդեն տեղադրված է 9 ստենդ:

Կորպորատիվ հատվածի հետ հաջող համագործակցության շնորհիվ ՀԿԽԸ-ն այս տարի կնքեց մի շարք նվիրատվության պայմանագրեր և դրանց միջոցով ունեցավ ավելի քան 80,000,000 ՀՀ դրամի՝ դրամական և բնափրային նվիրատվություններ:

Այս նվիրատվությունների շնորհիվ սննդամթերք և հիգիենայի պարագաներ են տրամադրվել սեպտեմբերի 13-ին և 14-ին հայ-ադրբեջանական սահմանին տեղի ունեցած ռազմական գործողություններից տուժած համայնքներից տեղահանվածներին: Ջերմուկ, Գորիս և Եղեգնաձոր բնակավայրերում սննդի նվիրատվությունների բաշխումը կազմակերպվել է ՀԿԽԸ-ի կողմից:

Տարեվերջին կազմակերպվեց թվային դրամահավաքի արշավ Տնային խնամքի ծրագրի շրջանակներում՝ «Միայնակ տարեցները ձեր օգնության կարիքն ունեն Ամանորի շեմին» խորագրով:

Թվային էջը՝ <https://www.redcross.am/news/support-home-care-service.html>, ծրագրի նկարագրությամբ և հնարավոր նվիրատվությունների վերաբերյալ տեղեկատվությունը ուղարկվել է Հայաստանում գործող ավելի քան 100 բիզնես ընկերությունների (փոքր, միջին և խոշոր բիզնես ընկերությունների): Արշավի արդյունքում հավաքագրվել է 228 109 ՀՀ դրամ:

2022թ. ընթացքում Երևանում և մարզերում տեղադրվել է 22 հանգանակության արկղ: Փաստացի ՀՀ տարածքում տեղադրված է 106 հանգանակության արկղ: Տարվա ընթացքում հանգանակության արկղերից հավաքագրվել է 1 927 874 ՀՀ դրամ: Գեներացված գումարով տարեվերջին Երևանում և մարզերում բնակվող խոցելի տարեցներին տրամադրվել է սնունդ և հիգիենիկ պարագաներ:

Կրթական և արդիականացման գործընթացները միշտ առաջնահերթություն են ՀԿԽԸ-ի անձնակազմի և կամավորների համար:

Այս տարի նույնպես կազմակերպվել է 2022 թվականի քարտեզագրում և գործառնական պլանի ուսուցում Հայաստանի 6 մարզային մասնաճյուղերի համար՝ Արագածոտնի, Կոտայքի, Տավուշի, Արարատի, Արմավիրի և Գեղարքունիքի 12 մասնակիցների մասնակցությամբ:

ՌՄ պատասխանատուն մասնակցել է «ՍՕՍ-Մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի անձնակազմի և ՀԿ-ների համապատասխան փորձագետների համար կազմակերպված «Դրամահավաքի և ծրագրի փուլային կառավարում» թեմայով դասընթացին, որը կազմակերպվել էր «ՍՕՍ-Մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից:

«Շարժումը՝ հանուն կրթության» պիլոտային ծրագրի շրջանակներում, որը խթանում է կրթության հասանելիությունը հակամարտությունից տուժած երեխաների համար, դեկտեմբերին տեղի ունեցավ «Արտակարգ իրավիճակներում կրթության կազմակերպման մեխանիզմները» թեմայով աշխատաժողով, որտեղ Արտակարգ իրավիճակներում դրամահավաքի և ռեսուրսների մոբիլիզացման թեման լուսաբանվեց ՀԿԽԸ ՄՄ 22 կամավորների համար:



ԳՐԱՑԻԱ

ՄԻԶԱԳՉԱՅԻՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ



«Գրացիա» միջազգային վերականգնողական կենտրոնում իրականացվում է ողնուղեղի, ողնաշարի, հենաշարժական ապարատի հիվանդությունների բուժում, ընդհանուր և հետվնասվածքային վերականգնում, սոցիալ-հոգեբանական վերականգնում:

Ողնուղեղի և ողնաշարի վնասվածքով յուրաքանչյուր հիվանդի հետ աշխատում է առանձին բժիշկ, բուժքույր, վերականգնող թերապիստ, հոգեբան և սպորտային մարզիչ: Կենտրոնն ունի ընդլայնված ստացիոնար և ամբուլատոր բժշկական ծառայություններ՝ անատորոշում, ջրաբուժություն, ջրային մերսում, ցեխաբուժություն/տորֆաբուժություն, կինեզոթերապիա, ֆիզիոթերապևտիկ բուժում, բուժական և դասական մերսում, էլեկտրաթերապիա, ինհալացիոն բուժումներ, սպորտային համալիր, սթրետչիոգի կաբինետ, «ՍԿԷՆԱՌ» բաժանմունք:

Կենտրոնի գործունեության ընթացքում արդեն բուժվել և իրենց առողջությունն են վերականգնել մոտ 15 000 հիվանդ ՅՅ-ից, ԱՊՅ-ից, Եվրոպայից և Մերձավոր Արևելքի մի շարք երկրներից: 2022թ. պետպատվերի շրջանակներում բուժում է ստացել 793 հիվանդ, Ղարաբաղյան հակամարտության սրացման հետևանքով վիրավորված, ՊՆ, Ոստիկանության և ԱԱԾ համակարգի 202 հիվանդ:



ANNUAL REPORT

2022

FUNDAMENTAL PRINCIPLES OF THE INTERNATIONAL RED CROSS AND RED CRESCENT MOVEMENT

HUMANITY

The International Red Cross and Red Crescent Movement, born of a desire to bring assistance without discrimination to the wounded on the battlefield, endeavors, in its international and national capacity, to prevent and alleviate human suffering wherever it may be found. Its purpose is to protect life and health and to ensure respect for the human being. It promotes mutual understanding, friendship, cooperation and lasting peace amongst all peoples.

IMPARTIALITY

It makes no discrimination as to nationality, race, religious beliefs, class or political opinions. It endeavors to relieve the suffering of individuals, being guided solely by their needs, and to give priority to the most urgent cases of distress.

NEUTRALITY

In order to continue to enjoy the confidence of all, the Movement may not take sides in hostilities or engage at any time in controversies of a political, racial, religious or ideological nature.

INDEPENDENCE

